AZG NEW PDF.qxd 15/04/2010 21:38 Page 1

Ազգ
Azg
16 ԱՊՐԻԼ 2010 ՈՒՐԲԱԹ 68 (4448)
ISSN: 1829-1651

# Ապրիլի 19-26-ը Կալիֆոռնիայում սգո օրեր են

Այս մասին նշված է Կալիֆոռնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերի տարածած հաղորդագրության մեջ: «Կարեւոր է հիշել անցյալի սարսափները՝ կանխելու համար պատմության կրկնությունը: Հայոց ցեղասպանությունը մարդու իրավունքների սարսափելի ոտնահարում էր: 1915-1923-ին մեկուկես միլիոն հայեր Օսմանյան կայսրության ձեռքով զրկվեցին կյանքից, իսկ եւս 500 հազարը հարկադրված լքեցին իրենց հայրենիքը», նշված է հաղորդագրության մեջ:

Շվարցենեգերը, ArmeniaDiaspora.com կայքէջի փոխանցմամբ, նաեւ հայտարարել է. «Որպես ամերիկացիներ եւ կալիֆոռնիացիներ, մեր պարտքն է բարձրացնել տեղեկացվածությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ եւ մասնակցել անմեղ կյանքերի կորստյան հիշատակմանը: Ապրիլի 19-26-ը Կալիֆոռնիայում հայտարարում եմ սգո օրեր», եզրափակել է Առնոլդ Շվարցենեգերը:

Հավելենք նաեւ, որ Կալիֆոռնիան ԱՄՆ-ի այն 42 նահանգներից է, որոնք ընդունել են Հայոց ցեղասպանության եղելությունը:

# Հասարակության հետաքրքրությունը հայ-թուրքական գործընթացի հանդեպ նվազել է

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հասարակության հետաքրքրությունը հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ գնալով մարում է, եւ թեման էլ հետզհետե կորցնում է իր հրատապությունը: Այդ մասին վկայում են սոցիոլոգների Հայաստանում կատարած հարցումների արդյունքները:

Երեկ Մամուլի ազգային ակումբում՝ ասուլիսի ժամանակ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահի **Գեւորգ Պողոսյանը** նշեց. «Մեզ հետաքրքրում է, թե բնակչությունն ինչպե՞ս է ընկալում հայ-թուրքական գործընթացը: Վերջին հարցումները կատարել ենք փետրվար ու մարտ ամիսներին Երեւանում եւ հանրապետության տարբեր մարզերում: Փետրվարին հարցվել է 1000 հոգի, իսկ մարտին՝ 500 հոգի: Ընդհանուր առմամբ՝ մարդկանց հետաքրքրությունը գործընթացի հանդեպ նվազում է»:



Սոցիոլոգներին հետաքրքրել է՝ եթե Հայաստանը հայ-թուրքական հարաբերություններում գնա զիջումների՝ Լեռնային Ղարաբաղի հետ կապված, ապա մարդիկ ինչպե՞ս դա կընդունեն: Այս հարցին մարդկանց 87 տոկոսը՝ փետրվար ամսին, իսկ մարտին 83 տոկոսը տվել են բացասական պատասխան:

Իսկ հասարակությունն ինչպե՞ս է գնահատում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Թուրքիայի հետ վարած քաղաքականությունը:

Փետրվարին հարցվածների 52 տոկոսը ՀՀ նախագահի վարած քաղաքականությունը գնահատել է դրական, իսկ մարտին հարցվածների՝ 54 տոկոսը:

Գեւորգ Պողոսյանը զարմացած էր հետեւյալ հարցի պատասխաններից՝ արդյոք Հայաստանն ունի՞ շոշափելի դերակատարություն տարածաշրջանում: Հարցվածների 64 տոկոսը փետրվարին, իսկ մարտին՝ 60,5 տոկոսը պատասխանել են, որ Հայաստանը լուրջ դերակատարում ունի տարածաշրջանում:

Սոցհարցման ժամանակ մարդկանց կեսից ավելին՝ 56 տոկոսը, երկու ամիսներին էլ ասել է, որ հավատում է Հայաստանի փայլուն ապագային:

Տես էջ 3

**ԳՅՈՒՆՏԵՐ ԳՐԱՍԻ «ԲԱՐԵՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ»**

# Թուրքիան ի՞նքը պիտի որոշի ինչպես կոչել «իրադարձությունները»

«Դոյչե վելլեն» հաղորդում է, թե Նոբելյան մրցանակակիր **Գյունտեր Գրասը** Ստամբուլում թուրք գրող Յաշար Քեմալի հետ համատեղ մամլո ասուլիսի ժամանակ Թուրքիայից պահանջել է ճանաչել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի դեմ կատարված ոճրագործությունը:

Դա կլինի Եվրոպային ուղղված կարեւորագույն քայլ, ասել է գերմանացի գրողը: Գերմանական մեկ ուրիշ՝ N24 լրատվական հեռուստաալիքի հաղորդմամբ, Գրասը հիշեցրել է, թե ինչպես Գերմանիան, այնպես էլ Թուրքիան պատմական ծանր բեռ ունեն: Ակնարկելով դաշնային նախկին կանցլեր Վիլլի Բրանդտի՝ 1970-ին Վարշավայի գետտոյի հուշարձանին ծնրադրման օրինակը, գերմանացի գրողն ասել է՝ ժամանակն է, որ Թուրքիան էլ նմանատիպ ժեստ անի:

Հայերը, ինչպես նաեւ միջազգային հետազոտողներ, հայերի կոտորածները որպես Ցեղասպանություն են բնորոշում, մի եզրաբառ, որ Թուրքիան կտրուկ մերժում է, հրազեկում է N24-ը: Ըստ նույն աղբյուրի, Գրասը շեշտել է, թե ինքը գիտակցված եզրաբառը չի գործածում, որովհետեւ Թուրքիան ինքը պիտի որոշի ինչպես կոչել իրադարձությունները: Գրողը այնուհետեւ հիշեցրել է, թե Գերմանիայում էլ նացի անցյալը պարզաբանելը հեշտ չի եղել, եւ կփափագեր, որ Թուրքիան էլ շրջանցեր իր տաբուները:

Գրասը Ստամբուլում է գտնվել Գյոթե ինստիտուտի կազմակերպած գրական հանդիպումների ծրագրի շրջանակներում:

Մեր կողմից ավելացնենք, որ զարմանալի է, որ հենց Գրասն է նման արտահայտության հեղինակը, մի գրող, որ բազմիցս է Հայոց ցեղասպանության հանդեպ հստակ դիրքորոշում հայտնել: Մեր հարցին ի պատասխան՝ Բոխումի Սփյուռք եւ Ցեղասպանություն ինստիտուտի տնօրեն Միհրան Դաբաղն էլ իր զարմանքը փոխանցեց՝ «Ինչպե՞ս կարելի է դահիճի՛ն տալ սահմանելու իրավունք»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Մերձդնեստրում հայ լրագրողին 20 տարվա ազատազրկում է սպառնում

Ապրիլի 7-ին դավաճանություն եւ լրտեսություն մեղադրանքով Մերձդնեստրում ձերբակալվել է հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանը, տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանը: 33-ամյա լրագրողը եղել է Մերձդնեստրի ռուսական «Նովի ռեգիոն» գործակալության թղթակիցը, միեւնույն ժամանակ աշխատելով մոլդովական «Պուլս» պարբերականի համար: Գործընկերները նշել են, որ ամեն օր Վարդանյանը Տիրասպոլից Քիշնեւ էր մեկնում ավտոբուսով: «Նա մեկն էր Տիրասպոլում գործող այն լրագրողներից, որոնք առանց վախի քննադատում էին իշխանությանը», նշել են լրագրողի գործընկերները: Իսկ Մոլդովայի նախագահ Միխայիլ Գիմպուն նշել է, որ Քիշնեւը որեւէ լծակ չունի ազդելու Տիրասպոլի վրա. «Բայց մենք արել ենք ամեն հնարավորը, կարծում եմ, իրավիճակը կփոխի հասարակական կարծիքը կամ եվրոպական կազմակերպությունների արձագանքը: Մոտ օրերս մենք պատրաստվում ենք լրագրողին ազատ արձակելու հարցը բարձրաձայնել Բրյուսելում եւ Վաշինգտոնում՝ միջազգային կառույցների հետ նախատեսված քննարկումների ընթացքում», նշել է Մոլդովայի նախագահը:

# Ադրբեջանցի սահմանապահի 17-ամյա վրացի զոհը

Հայ-ադրբեջանական շփման գծում կրակոցների ու դրանց վտանգավորության, ինչպես նաեւ ղարաբաղյան հարցը «տաք» պահելու առնչությամբ մտահոգություններ ու առաջարկություններ բազմիցս հնչել են, սակայն ադրբեջանական կողմն ամեն անգամ որեւէ կերպ շրջանցում է դիպուկահարների հարցը քննարկելու առաջարկությունները: Դիպուկահարների զոհերը կրկին պատերազմի զոհեր են, որոնց թվում ոչ միայն հայեր են:

Ադրբեջանական դիպուկահարի զոհ է դարձել նաեւ Վրաստանի մի քաղաքացի: Ապրիլի 13-ին ադրբեջանական սահմանապահը, ըստ վրացական լրատվամիջոցների, գլխին կրակոցով սպանել է Վրաստանի Էրիսիմեի գյուղի 17-ամյա քաղաքացի Իբրահիմ Գաորգաշվիլուն: Վերջինս կորած անասունները փնտրելով հայտնվել է վրաց-ադրբեջանական սահմանի ադրբեջանական կողմում:

Վրաստանի ԱԳ նախարարությունը հատուկ հայտարարություն է տարածել, որի համաձայն վրդովմունք է արտահայտում անմեղ քաղաքացու սպանության առնչությամբ: «Մենք մեծապես վստահ ենք, որ բարեկամ երկրի տարածքում պատահական հայտնված քաղաքացին չպետք է զոհ դառնար ուղիղ կրակոցին», ասվում է հայտարարությունում:

Վրաստանը, ի դեմս ԱԳՆ հայտարարության, պահանջում է ամբողջական եւ ժամանակին հետաքննել միջադեպը:

Ա. Հ.

# «Իրականում խնդիրը բուն Ղարաբաղը չէ, այլ՝ հարակից շրջանները»

## *Հայտարարել է վարչապետ Էրդողանը լրագրողներին՝ նախագահ Օբամայի հետ հանդիպումը պարզաբանելիս*

Ապրիլի 13-ին Վաշինգտոնում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդիպեց ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի հետ, իսկ հաջորդ օրը ուղեւորվեց Անկարա: «**Ազգը**» նախորդ համարում, հիմք ընդունելով թուրքական մամուլի տեղեկությունները, լուսաբանել է հանդիպումը: Երեկ «Հյուրիեթն» էլ անդրադարձավ Օբամա-Էրդողան հանդիպման մասին Սպիտակ տան ապրիլի 14-ի հաղորդագրությանը, որտեղ մասնավորապես ասված է. «Նախագահ Օբաման Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման ջանքերի համար իր աջակցությունն ու գոհունակությունը հայտնեց վարչապետ Էրդողանին եւ հորդորեց վարչապետին, որ հանուն ապագա սերունդների շարժվի արձանագրությունների վավերացման ճանապարհով»:

Թեեւ Թուրքիայի վարչապետարանը հանդիպման առնչությամբ որեւէ հաղորդագրություն չի տարածել, սակայն Վաշինգտոնից վերադարձին ինքնաթիռում թուրքական կենտրոնական 6 թերթերի ներկայացուցիչներին տված պարզաբանումներով վարչապետ Էրդողանն անձամբ գնահատել է այդ հանդիպումը:

Ներկայացուցիչների թվում է եղել նաեւ «Սաբահի» հեղինակ **Էրդալ Շաֆարը**, որն իր թերթի երեկվա համարում հարցազրույցի տեսքով շարադրել է Թուրքիայի վարչապետի պարզաբանումները: Դրանք հետաքրքրական են, հատկապես ԱՄՆ նախագահի հետ հանդիպմանն ու Հայաստանին առնչվող հատվածը, որտեղ Լեռնային Ղարաբաղի հետ արծարծվում է նաեւ հարակից շրջանների հարցը: Ուստի թարգմանաբար ներկայացնում ենք:

Տես էջ 8

# «Փոքր բիզնեսից եկած ամեն մի ահազանգ դառնալու է լուրջ քննարկման առարկա»

## *Ստուգումներ–հարկային մուտքեր արդյունավետությանը վերաբերող ելույթում խոստացավ վարչապետ Տիգրան Սարգսյանը*

**Կառավարության նիստը սկսելուց առաջ երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձավ նախորդ նիստի ժամանակ իր հայտնած տեղեկությանը, որ ուսումնասիրություններ են կատարվում 2008-2009-ին հարկային մարմինների կատարած ստուգումների արդյունավետության վերաբերյալ, քանի որ բազմաթիվ բողոքներ են ստացվել, որ ստուգումների քանակը փոքր եւ միջին ձեռնարկություններում չի նվազել: Նա նշեց, որ վարչապետի խորհրդականը պատրաստել է տեղեկանք, որի ցուցանիշները մտահոգիչ են: «Հարկային մարմինների կատարած հարկային ստուգումների ընդհանուր քանակը 2009-ին ավելացել է 82 տոկոսով, մինչդեռ ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարները նվազել են 25 տոկոսով: Հասկանալի է, որ մեր ռազմավարության հիմքում ընկած էր այն սկզբունքը, որ պետք է նվազագույնի հասցնենք շփումները հարկ վճարողների հետ եւ հիմնականում աշխատենք ռիսկերի վրա հիմնված վերահսկողությամբ, անհանգստացնենք միայն**



**այն հարկատուներին, որոնք չեն կատարում իրենց պարտավորությունները», ասաց վարչապետը եւ շարունակեց մանրամասներ հաղորդել: Համաձայն դրանց, «ցուցանիշների մեջ կան շեղումներ. ստուգումների քանակը՝ 82 տոկոսով, այդ թվում՝ խոշոր հարկատուների մոտ՝ 30 տոկոսով, մինչեւ 58 մլն դրամ շրջանառություն ունեցող հարկատուների մոտ՝ 70 տոկոսով, իսկ մյուս բոլոր հարկատուների մոտ՝ 250 տոկոսով: Միեւնույն ժամանակ հարկատուների երեք խմբերի ստուգումների լրացուցիչ առաջադրված գումարները նախորդ տարվա հետ համեմատած նվազել են 2-3 անգամ»:**

**Ըստ Տիգրան Սարգսյանի, ստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ գումարներ-վճարված հարկեր հարաբերակցությունը խոշոր հարկատուների մոտ 4 անգամ պակաս է, քան մյուս բոլոր հարկատուների մոտ: Ընդ որում, այդ տարբերությունը 2008-ին աճել է 3,8 անգամ, 2009 թ.՝ 4,6 անգամ: «Այսինքն ստացվում է, որ մենք խոշորների վերաբերյալ ավելի մեղմ մոտեցումներ ունենք, քան՝ փոքրերի», ասաց վարչապետը: Միեւնույն ժամանակ, ըստ այդ տեղեկանքի, յուրաքանչյուր ստուգմամբ մեկ հարկատուին առաջադրված գումարները, հարկատուից հավաքագրված հարկերի հետ համեմատության մեջ, 325 խոշոր հարկատուների մոտ ոչ միայն պակաս են ավելի քան 50 անգամ, քան մյուս հարկատուների մոտ, այլ նաեւ 2009-ին նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը նվազել է մոտ 40 տոկոսով:**

Տես էջ 2

AZG NEW PDF.qxd 15/04/2010 21:38 Page 1



# Աշխարհի ծանրացած խնդիրների լուծմանն ենք մասնակցել

*Ըստ Գալուստ Սահակյանի*

Երեկ լրագրողները փորձում էին ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանից** մանրամասներ իմանալ նախագահ Սարգսյանի վաշինգտոնյան այցի վերաբերյալ՝ ենթադրելով, որ նա՝ որպես ՀՀԿ ղեկավար անձ, պիտի որ հանդիպումների բովանդակային կողմին տեղյակ լինի: Սակայն, չէ, Գ. Սահակյանը (գիտեր, թե չգիտեր)՝ կարողացավ ոչ մի տեղեկություն չփոխանցել բուն հանդիպումների՝ իրեն հայտնի տեղեկատվության մասին: Փոխարենը գնահատականներ հնչեցրեց, թե վաշինգտոնյան հանդիպումները բացառիկ արդյունավետ էին, պատմական, «Հայաստանի նախաձեռնողական քաղաքականության հետեւանք, որն իրականացնում է երկրի նախագահը». «...փաստորեն սկսեցինք մասնակցել աշխարհի համար ծանրացած խնդիրների լուծմանը՝ սա ոչ միայն դիվանագիտական հաջողություն է, այլեւ միջազգային ասպարեզում Հայաստանի եւ նրա նախագահի վարկի մեծացում է», բացի այդ, ըստ բանախոսի, այս այցով ներհայկական միավորող վիճակ է ստեղծվել՝ արտերկրի հայկական կազմակերպությունները միավորվում են Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցը նշելու, Սփյուռքի կազմակերպություններն ընդունում են նախագահ Սարգսյանի «առաջնորդությունը համահայկական խնդիրների ճանապարհին»: Իսկ վաշինգտոնյան հանդիպումների արդյունավետության բնորոշիչը Գ. Սահակյանը համարեց այն, որ ընդդիմախոսների զինանոցն այս թեմայով խոսելիս դատարկվել է. ո՞ր ընդդիմախոսների՝ չասաց, համենայն դեպս՝ երեւի դա ՀՅԴ-ին չէր վերաբերում, որովհետեւ կոնկրետ ՀՅԴ-ին վերաբերող հարցին պատասխանելիս նա ՀՅԴ-ի մասին դրական խոսեց:




Հիմա հայ-թուրքական արձանագրությունների գործընթացը առաջխաղացում ունեցա՞վ Վաշինգտոնում, թե՞ ընդհակառակը. ըստ Գ. Սահակյանի՝ այցից հետո հարցի վերաբերյալ միջազգային հանրությունը նոր արձանագրումներ կանի հօգուտ մեզ, եւ միանգամից օրինակ բերեց. «Արդեն այսօր հրապարակվեց նաեւ Ալիեւի խոսքը, որ հայ-թուրքական հարաբերությունները երկու պետությունների գործն են», ասաց նա, հավելելով, որ ստորագրությունն արձանագրություններից հետ կանչելու կամ վավերացնելու գործոնն ավելի ցածր վիճակում է, քան միջազգային ասպարեզում այս պահին ունեցած առաջընթացը: Նա ենթադրեց, որ այսպես թե այնպես՝ սահմանի բացումն իրողություն կդառնա, եւ անգամ արձանագրությունների վավերացումից առաջ: Իսկ ընդհանրապես՝ նախագահ Սարգսյանը բոլոր հարցերի պատասխանը Վաշինգտոնում, Վիլսոնի շիրմին այցելության ելույթին, ինչպես նաեւ ավելի վաղ՝ արձանագրությունների ստորագրմանը նախորդած նախագահական ուղերձում, Լոնդոնի եւ Դեր Զորի ելույթներում տվել է:

Ըստ Գալուստ Սահակյանի՝ գնդակը ոչ միայն Թուրքիայի կիսադաշտում է, այլեւ կախված է Թուրքիայի դարպասի վրա, եթե դարպասապահը գնդակը բռնի՝ արձանագրությունները կվավերացվեն, իսկ եթե գոլ լինի՝ Թուրքիան կպարտվի ե՛ւ իրապես, ե՛ւ բարոյապես: Թուրքիան հիմա, ըստ նրա, մեղմացել է նաեւ ադրբեջանական ուղղությամբ, քանի որ թուրքական մամուլի մակարդակով ակնարկներ է անում, որ երկու շրջան անգամ եթե վերադարձվի Ադրբեջանին՝ հայ-թուրքական սահմանը կբացվի: Ուրեմն Թուրքիային մի փոքրիկ պատճառ է պետք սահմանը բացելու: Բայց Հայաստանն անզիջում է, նախ՝ Ղարաբաղի կարգավիճակը, ասաց Գ. Սահակյանը: Լրագրողները ճշտեցին. «Հետո Աղդամն ու Ֆիզուլի՞ն»: «Հետո Բաքուն», տակից դուրս եկավ Գ. Սահակյանը: Նախագահ Սարգսյանը վերջերս ասել էր, թե իրենց կյանքում երկու գիրք չկարդացած մարդիկ դասեր են տալիս, ո՞ւմ նկատի ուներ. Գ. Սահակյանը չգիտեր, բայց նկատեց, որ գիրքը նախանձ ունի, իսկ ազգը վարակված է կոմպյուտեր խաղալով ու... հեռահար հոդվածներ գրելով, բայց գիրք պե՛տք է կարդալ. ինչպե՞ս է հեռախոսը լիցքավորվում, լրագրողներն էլ այդպես լիցքավորվելու կարիք ունեն, նայելով երիտասարդ լրագրողուհիների լսարանին՝ նկատեց նա: «Իսկ հիմա ի՞նչ գիրք եք կարդում», իր կարծիքով դիմահար հարցով փորձեց շփոթեցնել եւ Գ. Սահակյանի գիրք չկարդալը «հայտնաբերել» երիտասարդ լրագրողուհիներից մեկը. «Ես ոչ միայն գիրք եմ կարդում, այլեւ բոլորիդ հոգիներն եմ կարդում եւ վիրավորվում եմ, որ այդպիսի հարց եք տալիս», ասաց նա՝ հիշելով իր բանասեր լինելը եւ հայ ու արտասահմանյան ողջ գրականությանը ծանոթ լինելը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆԱՏՈՒՆ

# Այսօր հայ ոստիկանի օրն է

Ինը տարի առաջ Հայաստանի անկախ հանրապետությունը որոշում ընդունեց՝ ապրիլի 16-ին տոնել հայ ոստիկանի օրը: Այդ օրվանից ամեն տարի ՀՀ ոստիկանությունը հատուկ մշակում է միջոցառումների ծրագիր: Այս տարվա միջոցառումները մեկնարկեցին երեկ, տոնի նախօրեին, «Հաղթանակ» զբոսայգում Հատուկ նշանակության ջոկատների մարտիկների հուշարձանին ծաղկեպսակի տեղադրման արարողությամբ, որից հետո ՀՀ ոստիկանության մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ:



Այսօր առավոտյան «Իրավակարգի զինվորի» եւ Արամ Մանուկյանի հուշարձաններին ծաղկեպսակներ դնելուց հետո, համակարգի ղեկավարները եւ հյուրերը Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտում կընդունեն տոնական զորահանդեսը: Իսկ շքերթի ավարտից հետո հանդիսավոր քայլերթ տեղի կունենա ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի գլխավորությամբ՝ Խանջյան-Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկից դեպի Ֆրանսիայի հրապարակ:

Տոնական օրը կավարտվի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ տոնական համերգով: Այդ օրը համակարգի աչքի ընկած ոստիկանները կպարգեւատրվեն տարբեր պարգեւներով ու խրախուսական նվերներով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Փոքր բիզնեսից եկած ամեն մի ահազանգ դառնալու է լուրջ քննարկման առարկա»

*1-ին էջից*

**Սա այն դեպքում, երբ նշված ժամանակահատվածում մյուս բոլոր հարկատուների մոտ այդ ցուցանիշները մնացել են գրեթե նույնը:**

**Այս առումով, Տիգրան Սարգսյանի կարծիքով, քննադատության հիմնական սլաքը պետք է ուղղել դեպի ֆինանսների նախարարություն, որովհետեւ ֆինանսների նախարարությունը պետք է պատասխանատու լինի քաղաքականության համար: «Կարծում եմ, ֆինանսների նախարարության դերակատարությունը պետք է ավելանա, որովհետեւ մեր ստանձնած ռեֆորմների ժամանակացույցը, ինչի մասին արդարացիորեն խոսում են ձեռներեցները, չի կատարվում», եզրակացրեց վարչապետը, նշելով, որ բիզնեսի համար ստեղծել բարենպաստ միջավայր միայն մեր մակրոտնտեսական բարելավմամբ չի կարող լինել: «Իսկ ստուգումների քանակն ավելացնելով՝ մենք միկրոմիջավայր չենք բարելավում: Մենք ընդամենը ավելացնում ենք դժգոհությունը տասնյակ հազարավոր ձեռնարկությունների, դժգոհություն պետության նկատմամբ, որովհետեւ մենք չենք կատարում մեր խոստումը»:**

**Երկրորդ խնդիրը, որի մասին խոսեց վարչապետը վերաբերում էր պետության կարիքների համար մեկ անձից գնումներ կատարելուն: «Այստեղ միասին փոխեցինք մեխանիզմները եւ արդեն իսկ ունենք էական առաջընթաց: Մասնավորապես, պետության կարիքների համար 2009 թվականի ընթացքում մեկ անձի գնման ձեւով կատարվել են 36 մլրդ դրամի գնումներ, որից առաջին եռամսյակում՝ շուրջ 16 մլրդ դրամի գնումներ: 2010 թվականին առաջին եռամսյակի արդյունքներով մեկ անձի գնման ձեւով կատարվել են 1,3 մլրդ դրամի գնումներ: Փաստորեն 2010 թվականի առաջին եռամսյակում մեկ անձից գնման ձեւով կատարված գնումների ծավալը 2009 թվականի առաջին եռամսյակի հետ համեմատ պակասել է շուրջ 13 անգամ, իսկ տոկոսային արտահայտությամբ նվազել է շուրջ 92 տոկոս: Սա էլ ֆինանսների նախարարության այն գործողությունն է, որը տվել է խիստ դրական արդյունք, որովհետեւ այս հարցում ֆինանսների նախարարությունը հետեւողական եղավ», ասաց Տիգրան Սարգսյանը, միաժամանակ ընդգծելով, որ նույնը դեռեւս չի կարելի ասել ստուգումների ոլորտի մասին: «Այստեղ անելիքներ ունի նաեւ էկոնոմիկայի նախարարությունը, որովհետեւ տեսչական բարեփոխումները, ստուգումների կանոնակարգվածությունը ձեր լիազորությունների շրջանակներում է», խոսքը Ներսես Երիցյանին ուղղելով, շեշտեց վարչապետը: Նա նշեց, որ եղել են բողոքներ, որ խախտելով վարչապետի հանձնարարականը 2009 թվականին ստուգումներ են իրականացվել փոքր ձեռնարկություններում: Վերջում Տիգրան Սարգսյանը, արձանագրելով, որ խոշոր բիզնեսը կարողանում է իրեն պաշտպանել, իսկ փոքր եւ միջին ձեռնարկությունները՝ ոչ, ընդգծեց, որ «ամեն մի ահազանգ, որը գալու է փոքր, միջին ձեռնարկություններից, դառնալու է լուրջ քննարկման առարկա»:**

Ա. Ս.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Տեսողությունը հատուկ հոգատարություն է պահանջում

Գարնանը հաճախ են առաջանում տեսողական խնդիրներ՝ աչքերի ալերգիկ եւ բորբոքային հիվանդություններ: Ակնաբույժները խորհուրդ են տալիս անգամ ամենափոքր գանգատի դեպքում դիմել բժշկի օգնությանն ու չզբաղվել ինքնաբուժությամբ:

«Այս սեզոնին հատկապես երեխաների մոտ առաջանում է գարնանային կատար, որի նախանշաններն են աչքերի քորն ու կարմրածությունը, լուսավախությունը, կարող է լինել նաեւ արցունքահոսություն, իսկ երիտասարդների ու մեծահասակների մոտ՝ ալերգիկ կոնյուկտիվիտ, որը բորբոքային հիվանդություն է եւ հիմնականում առաջանում է ծաղկային փոշիներից: Ալերգիկ հիվանդությունները կարող ենք բուժել, բայց դրանք կանխելն անհնար է», ասում է «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի ակնաբուժական կլինիկայի ղեկավար, գլաուկոմայի բաժնի վարիչ **Ալլա Հովհաննիսյանը**:

Հայաստանում օրեցօր ավելանում են տեսողական խնդիրներ ունեցող մարդիկ, ինչը պայմանավորված չէ միայն գարնան գալստով:

Ալլա Հովհաննիսյանը կարծում է, որ տեսողական հիվանդությունների ավելանալը հետեւանքն է մութ ու ցուրտ 1990-ական թվականների ու ներկայիս խրոնիկական սթրեսների:

«Երիտասարդների մեջ հիմա ավելացել են ռեֆրակցիոն հիվանդությունները՝ կարճատեսություն, հեռատեսություն, աստիգմատիզմ, որը ժամանակին մոմի լույսի տակ կարդալու հետեւանքն է,- ասում է ակնաբույժը,- 40 տարեկանից հետո արդեն ի հայտ է գալիս գլաուկոման, իսկ ավելի մեծ տարիքում՝ կատարակտը»:

Կատարակտը առաջանում է, երբ տարիքի հետ սկսում է պղտորվել աչքի ոսպնյակը: Հիվանդության առաջացման պատճառներից է նաեւ ուլտրամանուշակագույն ճառագայթումը: Սա ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում տարածված հիվանդություն է: Ժամանակակից վիրաբուժության միջոցով հնարավոր է հեռացնել կատարակտը եւ վերականգնել մարդու տեսողությունը:

«Գլաուկոմայի դեպքում տեսողության կորուստն արդեն անվերադարձ է: Գլաուկոման ներակնային ճնշման բարձրացումն է: Առաջ պոլիկլինիկաներում ստուգում էին ներակնային ճնշումը, եւ գլաուկոման ավելի շուտ էր բացահայտվում, բայց հիմա այդ ծառայությունը պոլիկլինիկաներում այլեւս չկա: Շատ անգամ էլ հիվանդը միայն այն ժամանակ է դիմում բժշկի, երբ գրեթե կուրանում է, եւ մենք արդեն ոչինչ անել չենք կարողանում: 40 տարեկանից հետո մարդը տարեկան գոնե մի անգամ պետք է ստուգի ներակնային ճնշումը», ասում է Ալլա Հովհաննիսյանը:

Գլաուկոմայի նախանշաններն են թույլ գլխացավերը, տեսողության նվազումը, ծանրության զգացողությունն աչքերում: Հիվանդներից 15%-ի մոտ նախանշաններ կարող են ընդհանրապես չլինել:

Ըստ ակնաբույժի՝ գլաուկոմայի առաջացումը պայմանավորում են տարբեր գործոններ, օրինակ՝ աչքի կառուցվածքը, ժառանգականության գործոնը եւ այլն:

Գլաուկոմա ունենալու դեպքում հիվանդը պետք է ընդունի քիչ խոլեստերին պարունակող եւ վիտամիններով հարուստ սնունդ, օգտագործի քիչ ալկոհոլ եւ ամենակարեւորը՝ ընդհանրապես չծխի:

Հիմա Հայաստանում շատ տարածված է չոր աչքի համախտանիշը, որն առաջանում է, երբ մարդը երկար է նստում համակարգչի մոնիտորի կամ հեռուստացույցի առաջ, եւ աչքի եղջերաթաղանթը սկսում է չորանալ: Մոնիտորին նայելիս աչքն անհրաժեշտ քանակությամբ թարթում չի կատարում, հետեւաբար եղջերաթաղանթը չի թացանում:

«Չոր աչքի համախտանիշից խուսափելու համար նաեւ պետք է երկար չնստել ծխով լցված եւ օդորակիչ ունեցող սենյակներում, որտեղ օդը շատ չոր է լինում: Հիվանդության սկզբնական ախտանիշն է աչքերի հոգնածությունը,- ասում է ակնաբույժը,- նախնական շրջանում սա բուժվող հիվանդություն է: Արցունքի պակասը պարզապես պետք է լրացնել արհեստական արցունքներ կաթեցնելով»:

Տեսողությունը հատուկ հոգատարություն է պահանջում, հետեւաբար տեսողական խնդիրները չի կարելի ականջի հետեւ գցել, հետագա բարդություններից խուսափելու համար պետք է ժամանակին դիմել բժշկի:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 15/04/2010 21:38 Page 1



## Անցուդարձ

# Յուրաքանչյուր հայ պետք է դառնա՞ այն կաթիլը, որ քար է ծակում

Նախագահ Սարգսյանն ԱՄՆ մեկնելուց առաջ, Տավուշի մարզ կատարած այցի ժամանակ ասել էր, թե Հայաստանն արդեն որոշում ունի հայ-թուրքական գործընթացի վերաբերյալ, սակայն այդ մասին կհայտարարի վաշինգտոնյան հանդիպումներից հետո, երբ համոզված լինենք մեր որոշման ճշմարտացիության մեջ: Ամերիկյան հանդիպումները մոտեցան ավարտին, մեր նախագահը Քլինթոնի հետ էլ գիշերով (մե՛ր գիշերով) հանդիպեց, բայց անգամ այսօրվա դրությամբ դրանց բուն բովանդակությունն առայժմ գաղտնիության քողի տակ է, եւ էլի դեռ շատ բան հայտնի չէ: Հայտնի չէ անգամ, թե այդ որոշումը վերաբերում է արձանագրությունների վավերացմա՞նը, հայ-թուրքական սահմանի բացմա՞նը, թե անգամ Ղարաբաղյան հիմնախնդրին: Այս ֆոնին հետաքրքրական էր երեկ թուրքական լրատվամիջոցների տարածած տեղեկությունն այն մասին, որ Հայաստանի նախագահը հանդիպել է Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի հետ եւ քննարկել հայ-թուրքական գործընթացը. սա էլ մեր նախագահի մամուլի խոսնակը հերքեց, բայց ընդհանուր առմամբ տեղեկատվության պակասն առասպելաբանության համար պարարտ հող է եւ հոգեբանական ավերներ է գործում: Մարդ աստծո, այցն ավարտվեց, մի մանրամասն տեղեկատվություն դրեք գոնե Հայաստանի նախագահի կայքում, ժողովուրդն իրավունք ունի՞ իմանալու ինչ է խոսում աշխարհի մեծերի ու հարեւանի ներկայացուցչի հետ իր նախագահը: Ի՞նչ է ասել Էրդողանը Սարգսյանին, իսկ Սարգսյանը՝ Էրդողանին, Օբաման Սարգսյանին, եւ Սարգսյանը Օբամային, դեռեւս մնում է ենթադրությունների մակարդակում: Հայոց քաղաքական միտքը շունչը պահած՝ փորձում է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ ադրբեջանական, բան փախցնել եւ եզրակացություններ անել: Ընդհանուր գաղտնիության ֆոնին՝ միակ հրապարակային աղբյուրը, որից կարելի է ինչ-որ բան գլխի ընկնել, ենթադրություններ անել կամ հետեւությունների հանգել, էլի մնում է նախագահ Սարգսյանի ելույթը՝ ԱՄՆ 28-րդ պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի գերեզմանին:

Հայոց քաղաքական էլիտան ընդամենը ֆորմալ մեկնաբանություններ է տալիս Օբամա-Սարգսյան, Սարգսյան-Էրդողան հանդիպումներին՝ իշխանականները կրկնում են նախագահ Սարգսյանի ձեւակերպումները, արտախորհրդարանական ընդդիմությունն աշխատում է անորոշությունից առավելագույն օգուտը քաղել՝ սեփական PR-ի պատուհանից սեւացնելով ամեն ինչ. է՛լ մարաթոնի անցում (հիշում ե՞ք՝ «կարեւորը մասնակցությունն է» եզրույթը), էլ՝ տարածայնությունների պահպանում եւ սրում, էլ՝ Էրդողանի կողմից երկխոսության շարունակման իմիտացիա, էլ՝ արձանագրությունները մեռած են, էլ՝ հայ-թուրքական գործընթացի վերակենդանացում՝ ո՞վ գլուխ կհանի: Հետեւություններում էլի կարեւոր է այն մտատանջությունը, ինչպես անցած տարի, թե կարտասանի՞ Օբաման «ցեղասպանություն» բառը, թե ոչ, հիմա էլ այդ մասին ենք «վնուշկեքի» մեջ ընկնելու, չնայած գիտենք՝ չի՛ ասելու, ԱՄՆ քաղաքական շահն ու այս բառի արտասանությունը դեռ չեն հավասարակշռվում: Բայց համ էլ մխիթարում են իրենց ու մեզ մեր քաղաքականները՝ «Վուդրո Վիլսոնի գերեզմանի ճառը տեսա՞ք». «Դա հզոր երկրի հզոր նախագահի ելույթ էր (ՀՀԿ-ական Հովհաննես Սահակյանը): ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանի** գնահատականն էլ այս է.«Երկրի նախագահը նորից վերահաստատեց այն կարծիքը, որ որեւէ մեկը մեզ չի կարող թելադրել եւ նախապայմաններ դնել մեր ազգի առջեւ ծառացած խնդիրների լուծման ճանապարհին: Մնացածը ոչ քաղաքական մտածողության հետեւանքներն են»:

Մեզ համար վաշինգտոնյան հանդիպումների ողջ տեղեկատվության մեջ ֆիքսել ենք այն, որ Սարգսյան-Էրդողան հանդիպման ժամանակ, փաստորեն, երբ Հայաստանի նախագահը Թուրքիայի վարչապետին հիշեցրել է արձանագրությունների վավերացման անհրաժեշտության մասին, վերջինս ասել է՝ հա՛, բայց Թուրքիայում որոշակի քաղաքական մթնոլորտ է անհրաժեշտ: Էրդողանը թնկթնկացել է, թե ԱՄՆ-ը, Շվեդիան, իրար հետեւից, ախր, եւ իրար հերթ չտալով՝ ընդունեցին հայկական բանաձեւեր, Հայաստանի ՍԴ-ն «համը հանեց», հետո՝ հայոց խորհրդարանն էլ ընդունեց արձանագրությունները հետ կանչելու փոփոխությունը. այ, սրանք խոչընդոտ են ու ներկա պահին եթե արձանագրությունները դրվեն թուրքական մեջլիսում վավերացման՝ կմերժվեն: Մեր նախագահը, ըստ տեղեկությունների, Էրդողանին հիշեցրել է արձանագրությունները Ղարաբաղի խնդրում առաջընթացի հետ կապելու թուրքական հայտարարությունները, Էրդողանն աղվեսություն է արել, թե՝ չենք կապում, Կովկասում ենք, իբր, խաղաղություն ուզում: Իմիջիայլոց՝ ամերիկահայ մի շարք կազմակերպություններ նախագահ Սարգսյանի այցի նախօրեին կոչով դիմել էին նախագահին՝ մի շարք առաջարկներով, այդ թվում՝ Օբամայի հետ հանդիպման ժամանակ բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, հրապարակավ աջակցել թիվ 252 բանաձեւին, դուրս գալ հայ-թուրքական հաշտեցման գործընթացից: Այնպես որ՝ մասամբ այս ուղերձին է գուցե անուղղակի պատասխանել նախագահ Սարգսյանը Վուդրո Վիլսոնի գերեզմանի մոտ արտասանած ճառում, ամերիկահայերին եւ Սփյուռքին ուղղված խոսքերում: Ասենք, որ հանդիպումներից հետո հայտարարությունների եւ մամուլի ասուլիսների բացակայությունն ու քննարկումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայությունը պարարտ հող են ամենաանհավանական ենթադրությունների, ընդդիմության եւ իշխանական քաղաքական ուժերի գնահատականների՝ տրամագծորեն հակադիր լինելու համար: Իսկ Վիլսոնի գերեզմանի մոտ նախագահ Սարգսյանը նախ շոյել էր ամերիկահայերին, որոնք հատկապես վերջին տասնամյակում շատ բան են արել որպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում, եղել են ամենաեռանդուն եւ հետեւողական օղակներից մեկը, որ նախագահի համոզմունքով այսուհետեւ եւս ջանալու է բազմապատկված ճիգերով. «Չկա Հայաստանի հայության եւ Սփյուռքի հայության կարծիքների տարբերություն, կա միասնական ժողովուրդ, եւ նա տեր է իր արդար դատին», ասել էր Հայաստանի նախագահը՝ այդպիսով սփյուռքին շոյելով եւ սեպ խրողներին իրենց տեղը դնելով: Ամերիկահայերին նախագահն անվանել է անխորտակելի ուժ՝ Հայաստանի միջազգային քաղաքական կշռի կարեւոր բաղկացուցիչ. «Դուք ձեր կեցվածքով ու վճռականությամբ ապացուցում եք, որ սխալ են բոլոր հաշվարկները, ըստ որոնց հայությունը կարելի է փոշիացնել ու ոչնչացնել՝ ցրելով աշխարհով մեկ: Յուրաքանչյուր հայ, ո՛ր մայրցամաքում էլ լինի, պետք է դառնա այն կաթիլը, որ քար է ծակում», ասել էր նախագահ Սարգսյանը: Խոսքի այն հատվածում, որն ուղղված էր Թուրքիային, ենթադրել է տալիս Սարգսյան-Էրդողան հանդիպման նյութի մի մասը: Ասելով, որ ցանկանում ենք բնականոն հարաբերություն հաստատել մեր հարեւանների հետ՝ նախագահն իր ելույթում ընդգծել է. «Բայց մենք չենք հանդուրժի, որ պայմաններ թելադրվեն մեզ», նրա այս եւ հետագա խոսքից միակ ենթադրությունն այն է, որ Էրդողանն, այնուամենայնիվ, առաջ է խոթել Ղարաբաղյան հարցը հայ-թուրքականին զուգահեռ լուծելու եւ ցեղասպանության ճանաչման հետ կապված թուրքական տեսակետները (Էրդողանի հետ հանդիպումը առավոտյան է եղել, Վիլսոնի գերեզմանի մոտ ելույթը՝ երեկոյան). «Թուրքիան չի կարող նախապայմանների լեզվով խոսել Հայաստանի եւ հայության հետ: Մենք դա պարզապես թույլ չենք տա» , ասել էր նախագահը՝ հավելելով, որ չենք պատրաստվում որեւէ ձեւաչափում քննության առարկա դարձնել Ցեղասպանության եղելության փաստը կամ ձեւացնել, թե հավատում ենք, որ Թուրքիան կարող է դրական դերակատարություն ունենալ Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացում:

Ահա հայտնի տեղեկատվության մի մասը, որ ոչ մեզ, ոչ քաղաքական գործիչներին դեռ թույլ չի տալիս եզրակացնել, թե ի՞նչ նոտայի վրա են ավարտվել ԱՄՆ-ում հայ-թուրքական շփումները, եւ արդյո՞ք այն որոշումը, որ Հայաստանն ուներ մինչեւ ԱՄՆ մեկնելը, հաստատվել է կամ փոխվել: Եթե սրան ավելացնենք, որ Թուրքիայի վարչապետը Թուրքիա վերադառնալուց հետո ասել է, թե Հայաստանը պատրաստ չէ կարգավորմանը, թե գոնե երկու «գրավյալ» շրջանից դուրս գա՝ հարցի լուծումը կարագանա: Իսկ APA ադրբեջանական գործակալությանը տված հարցազրույցում Դավութօղլուն անընդունելի էր համարել Ադրբեջանին դուրս թողնելը Հարավային Կովկասի հիմնախնդիրների լուծման գործընթացից, սա եւս հերքեցին, բայց նստվածքը մնաց, որ այնուամենայնիվ, տեսակետների բախում եղել է: Մնացյալը դեռ պետք է վերծանենք, մասնավորապես՝ արձանագրությունները մեռա՞ն, թե ողջ են եւ անգամ վերակենդանացա՞ն: Գուցե նախագահ Սարգսյանի արձակուրդի ավարտին շատ բան հայտնի լինի:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՀԱՐՑԱԽՈՒՅԶ

# Հասարակության հետաքրքրությունը հայ-թուրքական...

*1-ին էջից*

«Փայլուն ապագային վերաբերող պատասխանի լրջությունը ստուգելու համար տվել ենք նաեւ լրացուցիչ հարց. «Ուզո՞ւմ եք արդյոք , որ ձեր երեխաները մնան Հայաստանում, թե՞ գնան արտասահման»: Ստացանք հետեւյալ պատասխանը. «փետրվարին 27,6 տոկոսը, իսկ մարտին 35,4 տոկոսն ասացին, թե չեն ուզում, որ իրենց երեխաներն ապրեն Հայաստանում», տեղեկացրեց բանախոսը:

Փաստորեն մարդիկ տեսնում են հայրենիքի փայլուն ապագան, բայց իրենց երեխաների փայլուն ապագան տեսնում են Հայաստանից դուրս:

«Ինձ մտահոգում է վերջին՝ լրացուցիչ, հարցից ստացված թվերի նկատելի տարբերությունը, կարծում եմ՝ առաջացել է լարվածություն, քանի որ սրվել են հայ-ադրբեջանական հարաբերությունները,- ասում է սոցիոլոգը,- Ադրբեջանի հայտարարությունները գնալով դառնում են ռազմատենչ, իսկ մեր հակահարվածները քաղաքական պրոպագանդայի դաշտում մի քիչ ուշացումով են լինում, մենք շարունակ գտնվում ենք պաշտպանողական դիրքերում, ինչն էլ հավանաբար ազդում է մեր բնակչության գիտակցության վրա»:

Սոցիոլոգներին նաեւ հետաքրքրել է, թե վերջին 1-2 տարիներին ինչպիսի՞ փոփոխություններ են եղել հայաստանյան ներքին կյանքում, եւ արդյոք երկրում ամրապնդվե՞լ է օրինականությունը: Այստեղ սոցիոլոգի տրամադրած տվյալները բավականին հուսադրող են՝ փետրվարին հարցվածների 40 տոկոսը, իսկ մարտին՝ 49 տոկոսը տվել են դրական պատասխան:

Սոցիոլոգն ասում է, որ սոցհարցմանը մասնակցել են տարիքային տարբեր խմբեր, օրինակ՝ երիտասարդներն ընդհանրապես հետաքրքրված չեն հայ-թուրքական գործընթացով:

Ըստ **Գեւորգ Պողոսյանի**՝ հայ բնակչության համար տեղեկատվության գլխավոր աղբյուրը հեռուստատեսությունն է, հետեւաբար հայ-թուրքական գործընթացի մասին նրանք հիմնականում տեղեկանում են հեռուստաընկերություններից:

Հեռուստատեսությունից տեղեկացվում է մեր բնակչության 83-86 տոկոսը, թերթերից՝ 12-13 տոկոսը, ռադիոհաղորդումներից՝ 8-10 տոկոսը, շատացել են ինտերնետից օգտվողները՝ 1,5 միլիոն մարդ, սակայն մարդկանց 90 տոկոսն ինտերնետից օգտվում է ժամանցի ու զվարճանքի համար:

# Հայ-թուրքականը կտապալվի, եթե Ադրբեջանը ռազմական գործողություններ սկսի Ղարաբաղում

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն (ՌԱՀՀԿ) **Ռիչարդ Կիրակոսյանը**՝ վերլուծելով ՀՀ նախագահի վաշինգտոնյան այցն ու Սարգսյան-Էրդողան հանդիպումը, կարեւոր է համարում, որ ԱՄՆ մայրաքաղաքում չքննարկվեցին հայ-թուրքական արձանագրությունները: Փաստն արժեւորում է այն կապակցությամբ, որ վաշինգտոնյան հանդիպումը հայ-թուրքական հարաբերությունները փակուղուց դուրս բերելու փորձ էր, ինչն իր հերթին ազդարարեց, որ արձանագրություններն այժմյան վիճակով մահացած են:

Ըստ նրա, հանդիպումը հայկական կողմի համար բարեհաջող էր, այլապես թուրքական եւ ամերիկյան հակազդեցության տեղատարափ կլիներ: Կիրակոսյանի մատուցմամբ՝ հայ-թուրքական գործընթացը կշարունակվի: Դա է փաստում նաեւ երկու երկրների ԱԳՆ ղեկավարներին ուղղված հանձնարարականը՝ բանակցել եւ փորձել դուրս գալ փակուղային իրավիճակից: Գործընթացը դառնում է վտանգավոր. վաշինգտոնյան հանդիպումն ազդարարեց, որ հայ-թուրքական բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքի նման դառնում են գաղտնի:



Փորձագետը համոզված է, որ Թուրքիան Վաշինգտոնից գնում է թուլացած դիրքերով: Դա են փաստում ամերիկյան կողմի անդադար ճնշումները Թուրքիայի վրա:

«Ապրիլի 24-ից գրեթե երկու շաբաթ առաջ տեղի ունեցած վաշինգտոնյան հանդիպումը Թուրքիայի համար վերջին հնարավորությունն էր: Սրանից հետո Թուրքիայի համար նոր փորձաշրջան կսկսվի: Օբամայի խորհրդականը Էրդողանին ասաց, որ սա երկրորդ եւ վերջին հնարավորությունն է: Թուրքիան վտանգավոր խաղ է խաղում: Նրա ակնկալիքները բարձրացել են, ինչի հետեւանքով կարող է կորցնել ունեցածն ու հայտնվել ավելի վատ վիճակում»:

Կիրակոսյանը նկատում է, որ Սարգսյան-Էրդողան հանդիպման ամերիկյան գերնպատակներից էր մեկ քայլ առաջ անցել Ռուսաստանից եւ նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը: Փորձագետի բնորոշմամբ՝ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ ամերիկյան հետաքրքրվածության երկրորդ պատճառն ավելի ցինիկ է եւ մեծ հաշվով կապված է ԱՄՆ-ի ազգային շահի հետ:

Ինչ վերաբերում է ղարաբաղյան խնդրին, Կիրակոսյանը վստահ է՝ անհնար է, որ Թուրքիան Ղարաբաղի հարցում պահանջներ ներկայացնի:

Նա ուշադրության է հրավիրում, որ ԱՄՆ-ն հենց հանդիպումից առաջ որոշեց գագաթնաժողովին չհրավիրել Ադրբեջանին, մինչդեռ Ադրբեջանն Իրանի հարեւանն է, իսկ գագաթնաժողովի հիմնական թեման նվիրված էր Իրանում միջուկային զենքի ստեղծմանը:

«Բաքվին չհրավիրեցին, որպեսզի չխանգարի Երեւանի եւ Անկարայի բանակցություններին»:

Ղարաբաղյան հարցը դուրս է հայ-թուրքական հարաբերությունների համատեքստից, սակայն «Ադրբեջանը կարող է սպանել հայ-թուրքական հարաբերությունները, եթե ռազմական գործողություններ իրականացնի Ղարաբաղի ուղղությամբ: Խնդիրն այստեղ այն է, որ չկա ռազմական փոքր կամ կարճատեւ օպերացիա, վերահսկելը դժվար է եւ կարող է հասնել լայն մասշտաբների: Աշխարհն այս վտանգը տեսնում է, Արեւելքն ու Արեւմուտքը դա չեն ցանկանում: Խնդիրն այն է, որ Ադրբեջանի ներկայիս իշխանությունները ոչնչով չեն տարբերվում Վրաստանի իշխանություններից, եւ կարող է կրկնվել 2008-ի օգոստոսյան սցենարն ու Սաակաշվիլու պես Ալիեւի վրա էլ կարող են գործադրել ճնշումներ»:

Այս առումով ՌԱՀՀԿ տնօրենը բարձր գնահատեց ու կարեւորեց պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի պատրաստվածությունն ու վերջին ժամանակահատվածում նրա գործողությունները՝ լավագույն կերպով ու փաստերով ցույց տալով, թե որքան ուժեղ է հայկական կողմը:

«Պատահական չէ, որ Հայաստանը ադրբեջանցի ռազմագերիներին հետ ուղարկեց: Ադրբեջանում մեծամասնությունը գիտակցում է, որ պատերազմի վերսկսվելու դեպքում իրենք պարտություն կկրեն: Սակայն Ադրբեջանում համապատասխան գերատեսչություններն ու հատկապես պաշտպանության նախարարությունը ոչ թե գիտակից մարդիկ են ղեկավարում, այլ Սաֆար Աբիեւի պես տխմարները, որոնք ոչինչ չեն հասկանում»:

Թեպետ Ադրբեջանում գիտակցում են, որ հայկական կողմն ավելի ուժեղ է, այնուամենայնիվ, տարածաշրջանում ռազմական ապագան Ադրբեջանի ձեռքում է: Ադրբեջանի ներկայիս կացությունը Կիրակոսյանը համեմատեց Սադդամ Հուսեյնի ղեկավարած Իրաքի հետ. պատրաստվում են ոչ թե հաջորդ, այլ վերջին պատերազմին. մինչդեռ Հայաստանը պատրաստվում է ապագայի պատերազմին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Դժվար գյուղեր

*Շիրակ. գյուղական ուրվագծեր*

## Վերահայացած, բայց դեռ թույլ բնակեցված մի գյուղ, անունն Աղվորիկ

Աղվորիկի գյուղական դպրոցի երիտասարդ տնօրեն Արամ Սոլոյանը, որի հետ առաջինը ծանոթացա այս գյուղ այցելելով, սրտաբաց, ջերմ, հոգի մարդ է: Ինչպես պարզվեց, նա խորհրդային վերջին տարիներին Ախուրյանի շրջանում աշխատանքից իմ հին ծանոթ, այն ժամանակ Ախուրյանի կոլտնտեսության գլխավոր անասնաբույժ Ռազմիկ Սոլոյանի որդին է: Հայրն այժմ, Արամի պատմելով, մեծ կոլտնտեսություն է ղեկավարում Ռուսաստանի հեռավոր հյուսիս-արեւելքում՝ վայելելով նաեւ վարչապետ Պուտինի հարգանքն ու աջակցությունը: Իսկ որդին, մնալով Հայաստանում եւ տարիներ առաջ նույնիսկ թողնելով քաղաքային կյանքի հարմարությունները, ուրիշ իր նման մտածողների հետ ընտանիքով եկել է Ամասիայի շրջանում ադրբեջանցիների թողած գյուղերից մեկը վերստին հայ շնչով բնակեցնելու, այստեղ իր հայրենի օջախը ծխացնելու եւ դպրոցը պահելու: Գեղեցկահունչ նոր անունով այս բնակավայրի արդեն նոր պատմության հիմքերը դնելու: Իր տեղեկություններով՝ Աղվորիկը Արեւմտյան Հայաստանում մեր կորցրած գյուղերից մեկի վերակենդանացված անունն է:

Գյուղի մի կողմում անխաթար մնում է մինչեւ 1980-ականների վերջերն այստեղ ապրած հին եկվոր բնակիչների մահմեդական գերեզմանոցը, ոչ մի քարին ձեռք չտված, միայն ժամանակի ընթացքում մի երկու քար թեքվել է, ընկել: Ջարդել-մարդել՝ նման բաներ չեն եղել. «իրենց ցեղակիցների պես վանդալ չենք», ասում է: Համ էլ դա բնակավայրի պատմության մի էջն է, վախենալու, թաքցնելու բան չկա: Իսկ որ գյուղի պատմությունը սկիզբ է առնում նրանց այստեղ գալուց շատ առաջ՝ վկայում են նաեւ մի քանի տարի առաջ հնագիտական-հետախուզական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կիկլոպյան ամրոցն ու վաղմիջնադարյան բնակատեղին:

Խորհրդային տասնամյակներին սա մեծ գյուղ է եղել, հարուստ տնտեսություն է ունեցել՝ ոչխարաբուծությամբ հայտնի: Նախկին բնակիչների հեռանալուց հետո այստեղ վերաբնակվել են Ջավախքից ու հայաստանյան տարբեր բնակավայրերից եկածներ, որոնցից հատկապես ջավախքցիների հիմնական մասը, պայմաններին չհարմարվելով, նորից հեռացել են: Այսօր Աղվորիկն ընդամենը 20 տուն բնակիչ ունի, իսկ կիսավեր երբեմնի մշակույթի կենտրոնի շենքի մի հատվածում, հարմարեցված պայմաններում գործող հիմնական դպրոցը՝ 7 աշակերտ: «Դպրոցի տնօրեն լինելուց հետո, երբ այստեղ ընդամենը 2 աշակերտ էր,- պատմում է Սոլոյանը,- հինգ ընտանիք ես գյուղ բերեցի: Այդ ընթացքում մինչեւ 20 աշակերտ ունեցել ենք: Իսկ այսօր... դե, երիտասարդություն այդքան չկա, աճը շատ քիչ է, գյուղը, մի տեսակ, մարած է...»: Թեպետ, ասում է, այսօր էլ կան այստեղ գալ ցանկացողներ, ջահելներ, բայց պատրաստի տներ չկան: Ժամանակին իրենք բնակություն են հաստատել նախկին բնակիչներից մնացած տներում: Ի տարբերություն շրջակա գյուղերի՝ երկրաշարժից հետո այստեղ նոր տներ չեն կառուցվել, միայն հիմքեր են փորվել ու այդպես մնացել:

### Պետական աջակցությունը գյուղացուն կարող է ավելի արդյունավետ լինել

«Բնակչության քանակը քիչ է, ժողովուրդը համբերատար է»: Սա ասողն էլ գյուղապետարանում գանձապահ աշխատող **Գրիգոր Հարությունյանն** էր: Ավանդաբար այստեղ հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: «Մեր էս լեռնային գյուղում ուրիշ բանով զբաղվել չես կարող: Կան բնակիչներ, որ գարու, ցորենի ցանքս են կատարում, բայց չի արդարացնում: Հիմնականում մենակ խոտհարքն է»: Գյուղում, Հարությունյանի հայտնած տվյալներով, ընդհանուր հաշվով 400-450 գլուխ խոշոր եղջերավոր անասուն է պահվում, մանրը շատ քիչ է:

Բնակավայրի խնդիրների մասին զրուցեցինք Աղվորիկի համայնքապետ Նաղաշ Ղարիբջանյանի հետ: «Ընդհանրապես փոքր գյուղերի խնդիրներն ավելի մեծ են, քան մեծ գյուղերինը,- ասաց նա:- Փոքր գյուղերում ծրագրեր իրականացնելը, հաճախ պահանջվող մինչեւ 20 տոկոս համայնքային ներդրում կատարելը շատ դժվար է»: Օրինակ, իրենք 2003 թվականին ծրագիր էին շահել, նոր ջրագիծ էին ուզում բերել գյուղի համար, բայց ծրագիրը չիրագործվեց, որովհետեւ ընդամենը 20 ընտանիքով համայնքը չկարողացավ անհրաժեշտ ֆինանսական մասնակցություն ապահովել. ամեն ընտանիքին ընկնող գումարը իրենց համար մեծ էր: Հիմա համայնքի բյուջեի վիճակն ավելի լավ է, եւ երեւի տեղական բյուջեի միջոցներով ջրագծի մասնակի նորոգումներ կատարեն, մինչեւ տեսնեն հետագայում ինչ դուրս կգա:

Գյուղապետը եւս առաջինների թվում նշեց դպրոցի խնդիրը. «Աշակերտներ չունենք, քիչ են, դրա համար էս երկու տարի է՝ կրթօջախը դժվարությամբ ենք պահում: Բնական է, եթե համայնքների միացումն էլ եղավ՝ միանշանակ արդեն դպրոցը կփակեն»: Եվ աշխատատեղերի կորուստ կլինի, եւ առավել կարեւորը՝ երեխաների տեղափոխումը հարեւան գյուղերի դպրոցներ, նրանց ուսումը չեն կարողանա ապահովել:

Աղվորիկը, Ն. Ղարիբջանյանի տեղեկացմամբ, 640 հեկտար վարելահող ունի, բայց ժամանակին ինչ-ինչ պատճառներով դրանից սեփականաշնորհվել է ընդամենը 107 հեկտարը, տնամերձներն էլ հետը՝ 128 հեկտար հող: Բնակչության ներկա թվի պայմաններում եթե գյուղը այդքանն էլ կարողանար տեղը տեղին մշակել, ցանքերը բնության խստություններից պաշտպանել ու հարկավոր արդյունքը ստանալ, էլի կապրեր: Սակայն այսօր այս բարձրլեռնային ու սահմանամերձ գոտու գյուղացին դա մենակ, առանց պետության բավարար աջակցության չի կարող: Վկայակոչելով որոշ զարգացած կապիտալիստական երկրների օրինակը, գյուղապետն այս հարցում կարեւորեց, մասնավորապես, երկարաժամկետ վարկերի անհրաժեշտությունը: «Մեզ մոտ, ճիշտ է, գյուղբանկը վարկեր տալիս է, բայց՝ ընդամենը մեկ-երկու տարով, որից գյուղացին երկար եկամուտ տեսնել, տնտեսությունը զարգացնել չի հասցնում: Լավագույն դեպքում հասցնում է հազիվ վարկի տոկոսն ու մայր գումարը վերադարձնել: Բանկերը դրանից շահում են, գյուղացին՝ ոչ: Նույնը եւ գրավի հարցում է. մեր ո՛չ տները, ո՛չ հողերը ոչ մի բանկ գրավ չի վերցնում ու վարկ չի տալիս, իսկ գրավ դրվող անասունները դրանց իրական արժեքից մի քանի անգամ ցածր են գնահատում»:

Պետությունը վերջին 2-3 տարիներին այս շրջանների գյուղացիներին ցանք կատարելու համար փորձնական կարգով սուբսիդիա է տրամադրում, հեկտարի հաշվով 30, թե 35 հազար դրամի չափով: «Ծրագիրը սկսվելու առաջին տարին շատ լավ էր, նախանցյալ տարի գյուղում 98 հեկտար վար կատարվեց,- պատմում է համայնքի ղեկավարը:- Բայց այդ ոգեւորությունը շուտ մարեց, այսօր ընդամենը 7 հեկտար վար ունենք: Խնդիրն այն է, որ պետությունը սուբսիդավորում է միայն գարու ու ցորենի ցանքը, որոնց մշակությունը մեր պայմաններում արդյունավետ չէ: Մեր բարձրլեռնային անասնապահական գոտում մեզ հարմար ու եկամտաբեր կլինի անասնակեր ցանելը, եւ շատ ավելի արդյունավետ կլիներ, եթե այստեղ պետական աջակցությունը դրան ուղղվեր»:

### Եթե այսպես շարունակվի, մարդիկ նորից կլքեն այս բնակավայրերը

Փետրվարյան այդ օրը ձյունառատ Աղվորիկում իրադարձային էր. գյուղի նոր պատմության մեջ երեւի առաջին անգամ այստեղ, Շիրակի թեմակալ առաջնորդ Միքայել սրբազանի ձեռամբ եպիսկոպոսական պատարագ էր մատուցվում: Օգտվելով առիթից, այս գյուղերի ուրույն խնդիրների հետ կապված իր դիտարկումները ներկայացնել խնդրեցինք պատարագին մասնակցած, Ամասիայի տարածաշրջանի երիտասարդ հոգեւոր հովիվ **Փառեն քհն. Առաքելյանին**: Ինչպես նշեց տեր հայրը, շրջանում գերակշռող մեծամասնություն կազմած նախկին բնակիչների հեռանալուց ու նոր բնակեցումից հետո այս գյուղերում առաջնահերթ շատ խնդիրներ լուծված չեն: Եվ բերեց մի փաստ, որ, օրինակ, շրջանի 19 գյուղերը սպասարկում է միայն մեկ մանկաբույժ բժիշկ. նա Ամասիայում է նստում, հիմնականում ինքն է շրջում գյուղերում, եւ այդ մանկաբույժը 84 տարեկան կին է: Խնդիրներից մեկը, ուրեմն, բժշկության բացակայությունն է: Հիմա գոնե ճանապարհները բացվում են, տեխնիկա կա, բայց ինքը լսել է՝ նույնիսկ դեպք է եղել, որ ծննդաբերելու համար Ամասիա տեղափոխելու ճանապարհին ծննդկան կինն էլ է մահացել, երեխան էլ:

Ամասիայի, հարեւան Աշոցքի շրջաններում ձմեռը երեք ամիս չէ, ինչպես Արարատյան դաշտում, եւ համապատասխան ուշադրություն է պահանջվում, որը չկա: Ձմեռներն այստեղ նաեւ անհամեմատ ավելի խիստ են, պատարագի վայր դարձած դպրոցում ցուրտ էր: Եվ հետո, օրինակ՝ այս հիմնական դպրոցն ավարտելուց հետո երեխաներն ո՞ւր պիտի գնան միջնակարգ կրթություն ստանալու: Տեր հոր գնահատմամբ՝ եթե դա Արարատյան դաշտի պայմաններում լուծելի հարց է, ապա այստեղ ճանապարհի խնդիր կա: Եթե գնան միջնակարգ ունեցող ամենամոտիկ գյուղերից մեկը՝ Բերդաշեն, երեւի թե ամենաքիչը 7-8 կիլոմետր տարածություն պիտի անցնեն: Կոնկրետ այդ օրը Բերդաշենի ճանապարհը փակ էր, իսկ բաց էլ լինի՝ քամին ու եղանակային այլ երեւույթները չեն թողնի:

Զրուցակիցս ցավով նշեց. Ամասիայի գյուղերն այսօր նոր են բնակեցված, շատ փոքր տոկոսով: Որ մտնում ես գյուղ, անզեն աչքով էլ երեւում է՝ ինչն ինչ է: Եթե այսպես շարունակվի, եթե ժամանակին անհրաժեշտ միջոցներ չձեռնարկվեն՝ եկածների հիմնական մասն էլ գնալով պիտի լքեն այս բնակավայրերը: Իսկ մարդիկ շատ բան չեն ուզում, այլ միայն՝ որ իրենց առաջնահերթ խնդիրները լուծվեն:

«Վերեւ Աստված՝ առայժմ երեւի միայն եկեղեցին է հավատարիմ մնացել էս ժողովրդին, որ այս տեղերը չի անտեսում»,- ասաց տեր Փառենը՝ պատմելով իրենց կողմից մարդկանց հետ կատարվող աշխատանքի, նաեւ որոշ գյուղերում գոյություն ունեցող աղանդավոր ընտանիքների հետ կապված խնդիրների մասին: «Եթե ուզում ենք՝ մարդիկ դժվարությունների մեջ իրենց մենակ ու արհամարհված չզգան, եթե ուզում ենք հայությունը պահպանել ամբողջությամբ՝ պիտի յուրաքանչյուր տարածաշրջանում մարդկանց նկատմամբ ուշադիր լինենք... Յուրաքանչյուր տուն, ընտանիք որ մտնում ես մի բաժակ ջուր ես խմում, այդ ընտանիքի հետ զրույցի ես բռնվում, անկախ ամեն ինչից՝ եթե մարդը մեկին ունենում է, որ իրեն լսի, գոնե լսի՝ դա արդեն մեծ օգնություն է ինձ թվում է»:

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

## Խմելու ջրի համար Բագարանի բնակիչները ստիպված են երկու կմ գնալ ու գալ

Սահմանամերձ Բագարանի միակ աղբյուրը գյուղի կենտրոնից հեռու է երկու կիլոմետր: Մի քանի քայլ հեռու մեկ այլ աղբյուր էլ կա, այստեղից սակայն ջուրը մշտապես չի հոսում: Ջրով լի դույլերն ուսափայտից կախած կանայք ոտքով կտրում են այդ ճանապարհը, որպեսզի տուն խմելու ջուր հասցնեն: Օրական տասնյակ լիտրեր ջուր կրելը գյուղում կնոջ աշխատանքն է համարվում: Աղբյուրը գյուղում ոչ միայն միակն է, այլեւ բնակիչների համար բացառիկ է: Գյուղացիները հազար ու մի անցքեր են պատմում աղբյուրի մասին: Այստեղից ջուր է խմել եւ կողքին հանգստացել Գեւորգ Չաուշը, անգամ Պուշկինը Կովկասում ճամփորդելիս համտեսել է Բագարանի ջուրը:

Հայ-թուրքական սահմանին գտնվող Բագարան գյուղում տան ծորակներից ջուր երբեւէ չի հոսել, այստեղ բախտավոր են նրանք, որոնց տան բակով գոնե առու է հոսում: Գյուղապետը հաշվարկել է, ջրամատակարարման համակարգը կառուցելու համար 500 հազար դոլար է անհրաժեշտ, տարեկան 30 հազար դոլարից էլ պակաս բյուջե ունեցող համայնքն ինքնուրույն խնդիրը լուծել չի կարող: «Խորհրդային Միության տարիներին էլ գյուղացիները ջուր չեն ունեցել: Աղբյուրի ջուրը չի ֆիլտրացվում: Մինչ օրս գյուղացիներն առողջական լուրջ խնդիրներ չեն ունեցել: Ես խնդիրը ներկայացրել եմ մարզպետարան», ասաց գյուղապետ **Գեւորգ Մարգարյանը**:

Շուրջ տասը տարի առաջ գյուղացիները ջրամատակարարման համակարգ «այնուամենայնիվ« կառուցեցին, սակայն ինժեներական լուրջ խախտումներով: Համակարգը մեկ ամսից էլ քիչ աշխատեց, կանայք ստիպված էին կրկին դույլերը ձեռքերն առնել:

**Աննա Ասոյանը** Բագարան գյուղ հարս է եկել եւ ամուսնության հաջորդ օրն աղբյուր գնացել: «Դժվար էր, բայց սովորեցի: Ուրիշ ինչ կարող էի անել: Ջուրը եռացնում ենք, նոր ենք խմում: Դույլի տակ միշտ աղ է մնում: Բոլորն առողջական խնդիրներ ունեն, ատամներն են փչանում, ստամոքսի հիվանդություններ են առաջանում», պատմում է **Աննա Ասոյանը**:

**Նունե Ավդալյանը** պատմում է, որ թոռնիկների հագուստները լվալու համար տան բակով հոսող առվի ջուրն է օգտագործում: «Ուղղակի անհնար է այդքան ջուր կրել, ստիպված ենք լինում առվի ջուրն էլ օգտագործել», ասաց նա:

Մինչ գյուղի 680 բնակիչները լուռ համակերպվել են իրենց դրությանը եւ խնդիրների մասին միայն բարձրաձայնում են երբեմն- երբեմն այստեղ այցելող պաշտոնյաներին, մարզպետարանում հարցի մասին խոսելիս դեռեւս սահմանափակվում են ապագա ծրագրերի մասին նշելով: «Խնդրին ծանոթ ենք: Հիմա մշակում ենք մարզի զարգացման քառամյա ծրագիրը, որը պետք է ներկայացնենք կառավարությանը: Գյուղի ջրի խնդիրը ներառված է ծրագրում», ասաց Արմավիրի մարզպետ **Աշոտ Ղահրամանյանը**: Սակայն մինչ քառամյա ծրագրի հաստատումը մարզպետարանում փորձում են բարերարների գտնել՝ գյուղը ջրով ապահովելու համար: «Բագարանը մարզում միակ գյուղը չէ, որ նման խնդիր ունի: Շատ են նման գյուղերը», նկատեց մարզպետը:

Հանրապետությունում գործում է 5 ջրամատակարար կազմակերպություն: Հայաստանի շուրջ հազար բնակավայրերից 580-ն ընդգրկված չեն ընկերությունների սպասարկման ծրագրերում: Համայնքները ստիպված են լինում ինքնուրույն լուծել ջրամատակարարման խնդիրը: «Գյուղական բնակավայրերի 60 տոկոսը չի սպասարկվում: Որպեսզի գյուղական բնակավայրերն ընդգրկվեն ջրամատակարար ընկերությունների սպասարկման ծրագրերում, համայնքը պետք է իր համաձայնությունը տա: Ընկերությունն այդտեղ ներդրումներ պետք է կատարի, գյուղացին այնուհետեւ պետք է վճարի: Հաճախ գյուղացիները հրաժարվում են ընկերությունների ծառայություններից», ասաց ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ **Գագիկ Խաչատրյանը**: Միջազգային դոնորների միջոցներով սակավաթիվ գյուղերում ջուրն արդեն հոսում է ծորակներով, Բագարանը որեւէ միջազգային ծրագրերում ընդգրկված չէ: Կոմիտեի մասնագետները եւս հաշվարկել են. Բագարանին ջրամատակարարմամբ ապահովելու համար անհրաժեշտ է 125 մլն դրամ: Ջրային տնտեսության պետական կոմիտեն Համաշխարհային բանկի հետ պատրաստում է հանրապետության ջրամատակարարման զարգացման ուրվագիծ: Հենց այս ծրագրի շրջանակներում կոմիտեն վարձելու է խորհրդատուի, որը կզբաղվի սպասարկումից դուրս մնացած գյուղական համայնքների խնդրին լուծումներ առաջարկելով: «Կես տարվա ընթացքում կավարտենք ուսումնասիրությունները», ասաց Գագիկ Խաչատրյանը:

Մինչ պաշտոնյաները զբաղված են ուսումնասիրություններով, 18-ամյա **Սաթենիկ Վարդեւանյանը** հաստատ որոշել է, որ Բագարանում ապրել չի ուզում: «Չեմ ուզում այստեղ ամուսնանալ եւ շարունակել գյուղում ապրել: Չեմ ուզում շարունակ ջուր կրել», ասաց Սաթենիկ Վարդեւանյանը:

**ԱՐԵՎԻԿ ԲԱՂԱԼՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 15/04/2010 21:39 Page 1



# Ղարաբաղը՝ «օկուպացված» ուղեղներում

## *Հակահայկական քարոզչության ադրբեջանա-վրացական «դուետը» Եվրոպայի խորհրդի կոնֆերանսում*

Ասում են, թե տաղանդներին պետք է օգնել, անտաղանդներն իրենք կհարթեն իրենց ճանապարհը: Ճշմարտությունը բավականին նման է տաղանդի շատ առումներով, նաեւ այս, եթե հատկապես նկատի առնվի բոլոր այն ապատեղեկատվական, քարոզչական նյութերի տարածումը, որ Ադրբեջանում առատորեն տպագրում ու բաժանում են ղարաբաղյան հարցում կիսատեղյակ կամ անտեղյակ մարդկանց, մասնագետների, փորձագետների շրջանում: Ճշմարտությունը պետք է պաշտպանվի, այլապես ապատեղեկատվությամբ այն կարող է աղավաղվել անճանաչելիության աստիճանի:

Որ Ադրբեջանը բոլոր հնարավոր առիթներն օգտագործում է իրեն հարմար ու իր «ճշմարտությամբ» լցված նյութերի տարածման համար, նորություն չէ, սակայն երբ Եվրոպայի խորհրդի մակարդակով այդօրինակ գործելակերպը կարող է ներկայացվել որպես ազատության, այն էլ խոսքի ազատության դրսեւորում, բնավ էլ սովորական իրավիճակներից չէր:


Իվան Կոեջիկովը՝ ադրբեջանական գրքին ծանոթանալիս

«Ազատ լրատվամիջոցների պաշտպանության մեխանիզմները. աջակցություն Հարավային Կովկասում, Մոլդովայում եւ Ուկրաինայում արտահայտման ազատության արդյունավետ երաշխիքների ապահովմանը» թեման Թբիլիսիում տեղի ունեցող կոնֆերանսում է քննարկվում, որտեղ հարցերից մեկն էլ այն էր, թե որտեղից է անցնում խոսքի ազատության սահմանը: Ադրբեջանից կոնֆերանսի աշխատանքներին ներկայացած պատվիրակների համար թերեւս խոսքի ազատությունը ոչ մի բանով չէր տարբերվում քարոզչությունից, հատկապես որ դա հարեւան երկրում լրատվամիջոցների գործունեության սովորական նորմ է, ավելի շուտ՝ որեւէ կերպ դաշտում որեւէ գործունեություն ծավալելու հիմնական պայման:

Երեկվա նիստի ընդմիջմանը, հետաքրքրական ձեւով, Եվրոպայի խորհրդի ներկայացրած գրականության ու նյութերի սեղանին մի քանի գիրք հայտնվեց: Առաջին հայացքից հարավկովկասյան մեր երկու հարեւանների մոտ կան համախոհներ, որ միասին նույնաբովանդակ հրապարակումներ են ունենում՝ Վրաստանի ու Ադրբեջանի խնդիրները ներկայացնելով որպես «անջատողական» դրսեւորումների հետեւանք:

Ամենից առաջ, Վրաստանում Ադրբեջանի դեսպանատունն ամենայն հավանականությամբ նավթային փողերից իր բաժինն ունի հակահայկական քարոզչություն հենց Վրաստանում կազմակերպելու համար, քանի որ երեկվա գրքերը առաջին դեպքը չեն, երբ Վրաստանում Ադրբեջանի դեսպանատունը ջուր պղտորողի նման Վրաստանում հակահայկական գործերով է ներկայանում:

Գրքերը վերաբերում են ոչ միայն ղարաբաղյան խնդրի ադրբեջանական տեսակետը «հիմնավորելու» փորձերին, այլեւ հայ-վրացական հարաբերությունների «ադրբեջանամետ» դրվագներին, ԼՂ հարցի միջազգային իրավունքի հարցերի ադրբեջանական մատուցման, Հարավային Կովկասում «անջատողականության» խնդիրների ու այս ամենի նման այնպիսի թեմաների մասին են, որոնք ճշմարտության հետ ոչ մի աղերս չունեն:

Կոնֆերանսի մասնակից հայկական պատվիրակությունը դժգոհություն արտահայտեց Եվրոպայի խորհրդի գրականության կողքին հայտնված ադրբեջանական գրքերի առկայությամբ, ինչին, որքան էլ զարմանալի է, ազատականության անասելի բարձունքներից անդրադարձավ **Իվան Կոեջիկովը,** որ ղեկավարում է Եվրոպայի խորհրդի տեղեկատվական հասարակության եւ հանցագործության դեմ պայքարի վարչությունը: Նա նախ հայ մասնակիցներին հայտարարեց, թե արտահայտվելու ազատությունը չի ենթադրում այդ գրքերը չներկայացնելը:

«**Ազգը**» հետաքրքրվեց, թե արդյոք խոսքի ազատությունը ենթադրո՞ւմ է անպատասխանատու եւ կեղծ նյութերի ներկայացում, այն էլ Եվրոպայի խորհրդի կազմակերպած հանդիպմանը պաշտոնապես ներկայացվող գրականության կողքին: Պրն Կոեջիկովը արձագանքեց, որ ամեն դեպքում արտահայտման ազատությունը կարեւոր է, որից հետո կրկին դահլիճում հայտնված ադրբեջանական գրքերի տրցակը Կոեջիկովը տեղափոխեց ընդհանուր սեղանից, այդպես էլ չհամարձակվելով ուղղակի հեռացնել դրանք կոնֆերանսից:

Արդեն վերսկսված կոնֆերանսում Կոեջիկովը հրապարակավ նշեց, թե տեղի ունեցածը կոնկրետ օրինակ էր այն առնչությամբ, թե որքան զգայական կարող են լինել խոսքի ազատության դրսեւորումները: Ըստ նրա, կոնֆերանսի մասնակիցներից որոշները (ադրբեջանցիները-Ա.Հ.) գտել էին «խորհրդատվության առումով» անհրաժեշտ ու որոշ նյութեր էին ներկայացրել, իսկ մյուսները (հայերը-Ա.Հ.) բողոքեցին: «Մենք կարեւորում ենք ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, այն մեր կոնֆերանսի թեման չէ, բայց ցույց է տալիս կարեւորությունը քննարկելու, թե ինչ է խոսքի ազատությունը», ասաց ԵԽ ներկայացուցիչը: Հետաքրքրական էր, որ այդուհետեւ կոնֆերանսի ընթացքում Իվան Կոեջիկովն ուսումնասիրում էր Ադրբեջանի դեսպանատան ներկայացրած գրքերից մեկը: Իսկ ընդհանուր տպավորությունը Կոեջիկովի խոսքից ավելի շուտ խրախուսական էր նմանօրինակ քայլերի, ինչին էլ չուշացավ ադրբեջանցի դիվանագետի արձագանքը:

Վրաստանում Ադրբեջանի դեսպանատան ներկայացուցիչը, որ մասնակցում էր կոնֆերանսին, նշեց, թե իրենց ներկայացրած գրքերում չկա հակասական տեղեկատվություն, ու արդեն հոգնեցրած համառությամբ սկսեց խոսել «տարածքային ամբողջականությունից» ու դրա նման բոլոր այն հասկացություններից, որ Ադրբեջանը ներկայացնողները հաճախ ասում ու իրենք էլ լսում են գրեթե ամենուր, որտեղ դա թույլ են տալիս:

Ադրբեջանի ներկայացուցչին քանիցս եւ շատերը հիշեցրին, որ թեման բնավ էլ ղարաբաղյան հարցը չէ, չնայած ակնհայտ է, որ այս հիշեցումներն Ադրբեջանի ներկայացուցիչներին թելադրվող գործունեության որեւէ դրսեւորման առումով դժվար թե արդյունք տան:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թբիլիսի

# Լուկաշենկոն ափսոսում է, որ միջուկային զենք չունի



**Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն կշտամբել է Ռուսաստանին, որ ԱՄՆ-ից չի պահանջել բելառուսական պատվիրակության ներկայություն միջուկային անվտանգության Վաշինգտոնյան գագաթաժողովում: Լուկաշենկոյի կարծիքով, հանրապետության նախկին ղեկավարությունը «չարաչար սխալվեց»՝ համաձայնելով երկրից միջուկային զենքի դուրսբերմանը:**

**«Եթե հիմա Մինսկը միջուկային զենք ունենար, միջազգային գործընկերները կերաշխավորեին նրա անվտանգությունը», ասել է Բելառուսի նախագահը: Ըստ Լուկաշենկոյի, Ռուսաստանը, Ղազախստանը եւ գագաթաժողովին մասնակցած ԱՊՀ մյուս երկրները «եթե հուսալի բարեկամներ լինեին, ապա կպահանջեին Բելառուսի մասնակցությունը»:**

**Գոմելի մարզում աշխատանքային ուղեւորության ժամանակ Լուկաշենկոն ասել է. «Չեմ թաքցնի, մենք դեռ ունենք մի քանի հարյուր կիլոգրամ գերհարստացված, փաստորեն արդեն ռազմական ուրան եւ ունենք նաեւ պակաս հարստացված ուրան: Ոմանք ինձ ասում են՝ դուրս բերեք այդ ուրանը (Ամերիկա, Ռուսաստան), մենք ձեզ կվճարենք: Ես ասում եմ՝ մեզ մի՛ թելադրեք. դա մեր ապրանքն է եւ պահվում է ՄԱԳԱՏԷ-ի վերահսկողության տակ»:**

**Լուկաշենկոն հավաստիացրել է, որ Բելառուսը մտադիր չէ արտադրել «կեղտոտ» ռումբեր կամ որեւէ մեկին վաճառել հարստացված ուրանը: «Մենք ուրանն օգտագործում ենք հետազոտական նպատակներով», ավելացրել է նախագահը, որի խոսքերը մեջբերում է Ինտերֆաքս գործակալությունը:**

**Նախագահի կարծիքով, այն փաստը, որ միջուկային զենքին առնչվող տխած հարցերից խուսափելով՝ Իսրայելը չմասնակցեց Վաշինգտոնի գագաթաժողովին, «վկայում է, որ ամերիկացիներին եւ առհասարակ Արեւմուտքին վստահել չի կարելի»:**

# Հայց՝ Գերմանիայից ամերիկյան միջուկային զենքը հանելու պահանջով

## *Պատասխանողը Գերմանիայի կառավարությունն է*

**Գերմանիայի հակապատերազմական շարժման ակտիվիստուհիներից մեկը ապրիլի 14-ին Բեռլինի վարչական դատարան ներկայացրած հայցով պահանջում է երկրի տարածքից դուրս բերել ամերիկյան միջուկային զենքը: Այդ մասին հաղորդում է «Դոյչե վելե» ռադիոկայանի կայքէջը: Հայցվորուհին որպես պատասխանողի ընտրել է Գերմանիայի կառավարությանը:**

**Սա նմանօրինակ առաջին հայցն է երկրի պատմության մեջ, թեեւ մարտագլխիկների հարցը Գերմանիայում քննարկվում է արդեն երկու տասնամյակ:**

**Հակապատերազմական շարժման ակտիվիստուհին ապրում է Ռայնլանդ-Պֆալցի երկրամասում՝ «Բյուխել» ամերիկյան ռազմակայանից ոչ հեռու: Ենթադրվում է, որ դա Գերմանիայում միակ վայրն է, որտեղ պահվում են ամերիկյան ատոմային ռումբեր: Դրանց քանակը խիստ գաղտնի է պահվում, սակայն լրատվամիջոցները եւ հակապատերազմական կազմակերպությունները կարծում են, որ «Բյուխելում» պահվում է մոտավորապես 20 ռումբ: Այնտեղ է գտնվում նաեւ գերմանական օդուժի 33-րդ էսկադրիլյան, որը վտանգի ծագման դեպքում պետք է այդ ռումբերը հասցնի կիրառության շրջան:**

**Հայցվորուհին պահանջում է, որ Գերմանիայից հեռանա ՆԱՏՕ-ի պլանավորման խումբը, որին մասնակցելը երկրին ձայնի իրավունք է տալիս միջուկային զենքի կիրառմամբ գործողությունների իրականացման ժամանակ: Հենց այդ խմբին անդամակցելու պատճառով Գերմանիան պարտավոր է սեփական տարածքում միջուկային զենք պահել եւ վտանգի դեպքում օդանավեր տրամադրել դաշնինքին:**

**«Իրավաբաններն ընդդեմ միջուկային զենքի» կազմակերպության ներկայացուցիչները պաշտպանում են հայցվորուհու պահանջը: Նրանց կարծիքով, ՆԱՏՕ-ի պլանավորման խմբի պարտադրած կանոնները կարող են չհամապատասխանել միջազգային օրենդրության նորմերին: Բացի դրանից, ակտիվիստները երկյուղներ ունեն, որ այդ կանոնների պատճառով Գերմանիայի տարածքը կարող է անարդարացիորեն միջուկային հարվածի թիրախ դառնալ:**

# Տեխնիկական հանձնաժողովը լեհական օդանավի աղետի համար մեղադրում է օդաչուին



**Սմոլենսկի մոտակայքում ապրիլի 10-ին Լեհաստանի նախագահի օդանավի անկման հանգամանքները քննող տեխնիկական հանձնաժողովը եզրակացրել է, որ աղետի համար մեղավոր է օդաչուն: Քննության մասնակիցներից մեկը «Կոմերսանտ» թերթին հայտնել է, որ փորձագետները պարզել են օդանավի վայրէջքի մանրամասնությունները: Նման ծայրահեղ պայմաններում վայրէջքի փորձ կատարելիս օդաչու Արկադիուշ Պրոտասյուկը «դիմել է չարդարացված ռիսկի», կարծում են մասնագետները:**

**Լեհաստանում ապրիլի 14-ին վերծանել են օդանավի «սեւ արկղերը»: Այդ կապակցությամբ երկրի գլխավոր դատախազ, գնդապետ Քշիստոֆ Պարուլսկին հայտարարել է, որ օդանավի՝ գետնին զարնվելուց առաջ օդաչուները հասկացել էին բախման անխուսափելիությունը: Նա ավելացրել է, որ այդ պահին անձնակազմի անդամներն ասել են «դրամատիկական» խոսքեր:**

**«Սեւ արկղերի» վերծանման մասին լեհական ԶԼՄ-ներին պատմել է նաեւ զինվորական դատախազ, փոխգնդապետ Զբիգնեւ Ժեպան, որը մասնակցում է աղետի պատճառների քննությանը: Ժեպայի խոսքերով, առայժմ վերծանված բոլոր ձայնագրությունները օդաչուների խոսակցություններ են: Իսկ թե ուղեւորներից որեւէ մեկի հետ խոսվել է կամ չի խոսվել վայրէջքի տեղի մասին, հայտնի կդառնա, երբ վերծանվեն եւ թռիչքի ժամանակին համադրվեն բոլոր ձայնագրությունները: Խոսքը ԶԼՄ-ների այն վարկածի մասին է, թե բարձրաստիճան ուղեւորները եւ անձամբ նախագահ Կաչինսկին օդաչուների վրա թերեւս ճնշում են գործադրել վայրէջքի օդանավակայանի ընտրության հարցում:**

**Հայտնի է, որ ռուսաստանցի դիսպետչերները նախազգուշացրել էին Սմոլենսկի շրջանում հաստատված վատ եղանակի մասին եւ առաջարկել էին վայրէջք կատարել Մինսկում կամ Մոսկվայում, բայց օդաչու Պրոտասյուկը այնուամենայնիվ որոշել էր օդանավն իջեցնել Սմոլենսկի մոտակայքում:**

# Ձերբակալվել է նեապոլյան մաֆիայի պարագլուխներից մեկը

Իտալիայի ոստիկանությունը ձերբակալել է նեապոլյան մաֆիայի՝ «Կամորրայի» կլաններից մեկի 41-ամյա պարագլուխ Նիկոլա Պանարոյին: Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ Պանարոն, որին որոնում էին արդեն յոթ տարի, կալանավորվել է Նեապոլի արվարձաններից մեկում: Ոստիկանության տվյալներով, Նիկոլա Պանարոն գլխավորում է «Կազալեզի» կլանը, որն ամենաազդեցիկն է նեապոլյան մաֆիայում:

Պանարոն համարվում է Իտալիայի 30 առավել վտանգավոր հանցագործներից մեկը: Ներքգործնախարար Ռոբերտո Մարոնին նրա ձերբակալությունը համարում է պետության հակամաֆիական պայքարի «եւս մեկ ակնառու հաջողություն»:

2010-ի մարտի վերջերին իտալացի իրավապահպանները ձերբակալել էին «Կազալեզի» կլանի 12 անդամների, իսկ ապրիլի սկզբներին հայտարարվել էր այդ մաֆիական կազմակերպության 700 մլն եվրո ընդհանուր արժողությամբ ունեցվածքի բռնագրավման մասին: Այն ժամանակ Իտալիայի իշխանությունները «Կազալեզի» կլանի դեմ անցկացված հատուկ գործողությունը համարել էին խոշորագույնը երկրի հանցախմբերի դեմ մղվող պայքարի պատմության մեջ:

# Ժողովրդական երաժշտարվեստի պատանի պահապանները

Ժամանակակից արվեստն այսօր մտածողական մի ընդհանուր կաղապարով է վերաձեւվում՝ ընդառաջ գնալով ներկայի ակտուալ խնդիրներին՝ թե՛ նյութի, թե՛ ձեւի, թե՛ բովանդակային-թեմատիկ առումներով. այն իր մեջ կրում է դարի տեմպը, մտքի ու կեցության տենխոկրատացումը (սա նկատելի է հատկապես կերպարվեստում եւ ճարտարապետության մեջ): Սակայն անհնար է մի ընդհանրական համաձուլվածքով փորձել վերացնել ամենատարբեր ավանդույթներով ձեւավորված ու ակնհայտ առանձնահատկություններով օժտված մշակութային բազմազանությունները՝ պայմանավորված տվյալ էթնոսի ծագումնաբանությամբ, պատմությամբ, ավանդույթներով ու սովորույթներով, աշխարհագրությամբ, ինչը կազմում է նրա մշակութային ժառանգական կոդը:

Ժողովրդական երգարվեստը վերջին տասնամյակում կարծես կորցնում էր իր հետաքրքրությունն ու ակտուալությունը, ժամանակակից երաժշտական ուղղությունների, ամենաբազմազան ռիթմերի մեջ այն թվում էր այլեւս կորուսյալ: Սակայն հատկապես այս մի քանի տարին նկատելի դարձավ դրա կենսունակությանն ու վերածննդին ուղղված ջանքերի արդյունքը՝ վերադարձնելու ժողովրդական արվեստի հանդեպ հանրային նախկին ուշադրությունը: Այս շարժումը ուղղված է ժողովրդական բանարվեստի ակունքներին՝ որոնելու, գտնելու մոռացված ավանդույթներ, ուսումնասիրելու եւ կյանքի կոչելու ժողովրդական մեղեդիներ ու նվագարաններ: Այս նպատակին է կոչված «Նարեկացի» ժողովրդական նվագարանների համույթի գործունեությունը՝ ճանաչված թառահար **Հովիկ Սահակյանի** գեղարվեստական ղեկավարությամբ: Համույթը ձեւավորվել է 2008 թ.՝ շնորհիվ «Նարեկացի» արվեստի միությունում Արա Գեւորգյանի նախաձեռնությամբ եւ Ալֆրեդ Թերզիբաշյանի աջակցությամբ 2005-ին կազմակերպած թառի եւ քամանչայի անվճար դասընթացների, որին զուգահեռ սաները համերգային ծրագրեր էին նաեւ իրականացնում: Համույթի 26 անդամները 6-22 տարեկան երաժիշտներ եւ երգիչ-կատարողներ են, որոնք այսօր էլ շարունակում են դասընթացային ծրագրերը, արդեն՝ ժողովրդական նվագարանների, ինչպես ուսումնասիրության, այնպես էլ պատրաստման ուղղությամբ:

«Ազգային նվագարանների վերածնունդ» ծրագրի (որի շրջանակներում է գործում «Նարեկացի» համույթը), նպատակը ակտիվ գործածությունից դուրս մնացած, այլեւ թանգարանային նմուշ դարձած, ավելի շատ Արեւմտահայաստանում պահպանված, մասնավորապես՝ համշենահայության, գործիքների ներմուծումն է մեր երաժշտական կյանք, դրանք ներկայացնելը, համերգային շրջանառության մեջ դնելը: Կարճ ժամանակընթացքում համույթը իր նվագարանների քանակը հարստացրեց՝ հասցնելով տասներկուսի. քանոնը, թառը, ուդը, քամանչան, սանթուրը, դափը, շվին, զուռնան այսօր պատանի երաժիշտների ձեռքին հնչում են վարպետ կատարումներով՝ ուսուցման հմտության հետ մեկտեղ ժողովրդական երգ ու երաժշտության հանդեպ նրանց անկաշառ սիրո ու մաքուր նվիրվածության շնորհիվ:



Առաջին հանրային ելույթը խումբն ունեցավ իր ձեւավորման օրը՝ օգոստոսի 27-ին՝ «Հայաստանում լիբանանյան օրերի» շրջանակներում, ապա համերգային կատարումներով հանդես եկավ Երեւանում, Հայաստանի մարզերում եւ Արցախում: Մասնակցել է տարբեր մրցույթների, արժանացել մի շարք մրցանակների:

2010 թվականը համույթի կենսագրության մեջ նոր ու կարեւոր էջ է բացելու՝ արտասահմանյան առաջին ուղեւորությամբ: «Երկիր Եվրոպա» կազմակերպության հրավերով եւ ֆրանսիական Ռոն Ալպ շրջանի ֆինանսական աջակցությամբ «Նարեկացի» համույթը ապրիլի 22-ից մայիսի 8-ը համերգային շրջագայություններով հանդես կգա եվրոպական մի շարք քաղաքներում՝ Փարիզ, Լիոն, Մոնթելիմար, Ռոման, Ժնեւ, Ցյուրիխ, Թուլուզ եւ այլն: Ապրիլի 30-ին Փարիզում կայանալիք բարեգործական համերգի ողջ հասույթը տրամադրվելու է 2008-ին Թբիլիսում ավտովթարից տուժած, մորը կորցրած եւ Փարիզ փոխադրված իննամյա Ալեք Չուֆլաքյանի բուժմանը:

Ռոմանի երաժշտանոցում համերգային կատարումներին զուգընթաց կանցկացվեն փոխադարձ վարպետության դասեր: Համերգներից առաջ պատանի երաժիշտները կներկայացնեն հայ ժողովրդական նվագարանները, դրանց ծագումն ու պատմությունը, առանձնահատկությունները:

Ինչ խոսք, որ այսպիսի հանդիպումները, մշակութային երկխոսությունները տարբեր ժողովուրդների փոխհարստացման եւ փոխլրացման, ինչպես եւ նոր ծրագրեր սկսելու լավագույն առիթներից են, բնականաբար՝ հայ երաժշտությունը եվրոպացի արվեստասերներին ծանոթացնելու հնարավորություն նաեւ:

Համույթի արտասահմանյան շրջագայության մեջ կարեւորվում է ապրիլի 24-ին Լուգանոյում (հաջորդ օրը՝ Ժնեւում) նախատեսվող ձեռնարկը՝ Մեծ եղեռնի նահատակներին նվիրված համերգային եւ ցուցահանդեսային բաժիններով: Համերգային ծրագրի առաջին մասում ընդգրկված են հայ հոգեւոր երաժշտության եւ Կոմիտասի ստեղծագործությունների կատարումներ, երկրորդում՝ կհնչեն ազգային վերածնունդը խորհրդանշող երգեր՝ աշուղական եւ ժողովրդական: Անդրադարձ կլինի թուրքական կառավարության կողմից իր բնօրրանում արեւմտահայությանը ծրագրված ոչնչացնելու, զանգվածային ջարդերի ականատես շվեյցարացի միսիոներ Յակոբ Կյունցլերի՝ ի նպաստ հայությանը ցուցաբերած մարդասիրական, որբախնամ գործունեությանը:

Իսկ մինչ Եվրոպա մեկնելը՝ «Նարեկացի» համույթի արտերկրյա համերգային այս ծրագրին, ինչպես նաեւ նրա հետագա գործունեությանը սատարելու նպատակով Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը ապրիլի 18-ին տեղի կունենա բարեգործական համերգ. այն «Ճանաչենք ազգային նվագարանները» ծրագրի մեկնարկը կլինի: Եվրոպական համերգային առաջին ուղեւորությունից առաջ համույթին հայ հանդիսականի քաջալերանքն ու ոգեշնչումն իսկապես անհրաժեշտ են:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ

# Հայոց ցեղասպանությունը՝ արտացոլված երաժշտության մեջ

Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցի կապակցությամբ հրատարակվել է սիրիահայ հեղինակ Ավո Գաթրճյանի «Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրա» գիրքը: Ուսումնասիրելով Հայոց ցեղասպանության արտացոլումը երաժշտության տարբեր ժանրերում, հեղինակը ներկայացնում է նյութեր, որոնք պատմավավերագրական կարեւոր աղբյուրներ են, մանավանդ, դրանք ընդգրկված են զանազան վավերագրական ֆիլմերում:

Գրքի ստեղծման աշխատանքներն ընթացել են շուրջ 10 տարի: Հեղինակն ուսումնասիրել է ավելի քան 200 երգ՝ օսմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, պարսկերեն, հայերեն, արաբերեն լեզուներով:

Ներկայացված են հատվածներ երաժշտական ամենատարբեր ժանրերից ու ֆիլմերից:

Հիմնվելով վերապրողների վկայությունների վրա, հեղինակը բացատրում է, թե ինչպես է հայ ժողովուրդը երգերում արտահայտել նախացեղասպանության դեպքերը: Հեղինակը կենտրոնացել է նաեւ հետցեղասպանության հանգրվանի վրա: Հատկանշական է, որ այս ժամանակահատվածում հայերն իրենց ցավը երգել են ոչ միայն հայերեն, այլեւ բազմաթիվ օտար լեզուներով:

«Երգն ու երաժշտությունը մեր կյանքի հիմնական բաղադրիչներից եւ արտահայտչամիջոցներից են: Երաժշտության շնորհիվ են արտահայտում հոգին փոթորկող ապրումները՝ հույզեր, ողբ, ցավ, վիշտ, պոռթկում, բողոք, ուրախություն, սեր: Գրքում ներկայացված երաժշտական ստեղծագործությունները կապացուցեն, որ Հայոց ցեղասպանությունը վավերագրված եւ արտացոլված է երգ-երաժշտության մեջ», ասում է հեղինակը:

Գրքի ստեղծման նպատակով Գաթրճյանը համագործակցել է բազմաթիվ արվեստագետների, բեմադրիչների, մեկնաբանների, հայտնի հեղինակների հետ, ովքեր երգերի համար գրում են խոսքեր, որպեսզի գիրքը լինի ավելի բովանդակալից, մեկնաբանությունները՝ լիարժեք:

Գիրքը բաղկացած է 600 էջից: «Հետցեղասպանության ժողովրդական եւ ժամանակակից երգ-երաժշտություն», «Վերապրողների հուշեր», «Ցեղասպանության ենթարկված շրջաններին նվիրված երգեր», «Օտարները, որոնք երգում են Հայոց ցեղասպանության մասին», «Հայոց ցեղասպանությունը դասական երաժշտության մեջ» եւ այլ բաժիններում հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի ցավն ու տառապանքը հնչյունների լեզվով:




Ուսումնասիրության նպատակն է վերլուծել, թե տասնամյակների ընթացքում Ցեղասպանություն հասկացությունը ինչպես է ներկայացվել երաժշտության մեջ: Գիրքն ապացուցում է, որ աշխարհի բազմաթիվ երկրներում հնչել են Ցեղասպանության վերաբերյալ երգերը, ինչը նպաստել է, որպեսզի օտարները ոչ միայն ծանոթանան հայ ժողովրդի պատմության ամենադաժան էջերին, այլեւ աշխարհի բազմաթիվ երկրներում ճանաչվի Հայոց ցեղասպանությունը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Էվելինա Եղիազարյանի ներաշխարհը գեղեցիկի արտացոլումն է

Ժողովրդական արվեստի թանգարանում բացվեց Էվելինա Եղիազարյանի անհատական ցուցահանդեսը, որը կրում է «Հայուհու ձեռարվեստը» խորագիրը: Ցուցահանդեսը բացեց թանգարանի տնօրեն **Հովիկ Հովեյանը** ու բարձր գնահատեց ձեռագործ աշխատանքների վարպետ Էվելինա Եղիազարյանի գործերը: Արվեստաբան **Մարինա Ստեփանյանը** մանրակրկիտ անդրադարձավ ներկայացված աշխատանքներին ու բնորոշեց Էվելինայի ոճը, մտքի թռիչքը, որոնցով նա հաճույք է պատճառում դիտողին, ինչպես երաժշտական թաքուն զարդատուփն ամեն անգամ բացելիս: Ցուցահանդեսին Էվելինան ներկայացրել էր կանացի արդուզարդի մի քանի տասնյակ նմուշներ, թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերով զարդարված կանացի ճտքակոշիկներ, բիսերով հավաքած գոբելեն կտավներ, ձեռքով կարված մուշտակներ, կանացի տոնական զգեստներ, նաեւ՝ մետաքսե ժապավեններից կարած, երեկոյան կոկտեյլի յուրօրինակ զգեստներ:

**«Ազգը»** զրուցեց Էվելինա Եղիազարյանի հետ ու տեղեկացավ, որ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտը (խմբավարական բաժին) մանկուց սիրել է հագուստի մոդելավորման մասնագիտությունը եւ տանը ձեռքի տակ եղած կտորներից սկզբում իր տիկնիկների համար է զգեստներ կարել, հետո էլ՝ իր համար, իսկ այնուհետեւ...

Կոնսերվատորիան ավարտելուց հետո Էվելինան ընդունվում է Երեւանի «Բաց համալսարանի» հագուստի մոդելավորողի ֆակուլտետն ու մասնագիտանում: Հենց առաջին կուրսից իր աշխատանքները ներկայացրել է հանրությանն ու մշտապես արժանացել բարձր գնահատականի: Էվելինան զբաղվում է նաեւ արդուզարդի դիզայնով, կոճիկների նախշազարդմամբ, մուշտակների յուրօրինակ ձեւավորմամբ, նոր նմուշների ստեղծմամբ:

Ցուցասրահից ներկաները չէին կարողանում հեռանալ: Հմայված էին բնության մեջ հաճախակի հանդիպող, երբեմն չօգտագործվող նյութերից, քարերից, թելերից ու մետաղից հյուսված, մշակված, ներկված բարձր ճաշակով ստեղծված ցուցանմուշներից, որոնք շատ ավելի մոտ են ռոկոկո ոճին: Էվելինան իր համար ընդունել է մի խորագիր. «Իմ զարդերի աշխարհը գեղեցիկի հետ կփրկի աշխարհը»: Նա փնտրում-գտնում է գեղեցիկը եւ նվիրում կանանց: Այցելուները հարցերի հեղեղ էին թափել Էվելինայի գլխին, թե որտեղի՞ց հնարավոր կլինի գնել այդ գեղեցիկ ու անկրկնելի գործերը: Ցավոք, պետք է հիասթափեցնենք, որ դրանք չեն վաճառվում. հեղինակն իր ստեղծագործությունները կրում է ինքը: Ցուցահանդեսը կգործի մինչեւ ապրիլի 21-ը՝ Ժողստեղծագործության թանգարանում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# «Անի» գրադարանը բացվելու է ժամանակին

Ամերիկայի Հայկական ցեղասպանության թանգարանից (ԱՀՑԹ) տեղեկացնում են, որ նախքան թանգարանի պաշտոնական բացումը, ապրիլի 24-ի նախօրյակին, ցեղասպանության 95-ամյակի առթիվ սկսելու է գործել թանգարանի «Անի» Հայ ազգային ինստիտուտի Ուսումնասիրությունների գրադարանը, որը 2003 թվից մաս է կազմում ԱՀՑԹ կազմակերպության: «Անի»-ն հիմնադրվել է 1997-ին Ամերիկայի հայկական համագումարին տրված հատուկ գրանտի շնորհիվ: Իր ներկայիս 8000 հատորներով գրադարանը հիմքն է ստեղծելու թանգարանում նախատեսված 100 հազար գրական միավորների պահպանման եւ ուսումնասիրության համար: Թանգարանին կից գործող հարմարավետ շենքի 3 հարկերը տրամադրվելու են գրադարանին, որը բաց է լինելու բոլոր նրանց առջեւ, ովքեր ընդհանրապես ցեղասպանության եւ մասնավորապես Հայոց ցեղասպանության հարցերով են զբաղվում:

Հիշեցնենք, որ ԱՀՑԹ-ի գործունեությամբ զբաղվող հանձնաժողովի անդամներն են Էդել Հովնանյանը, Դենիզ Դարմանյանը, Ռիչարդ Պապալյանը եւ Ջավեն Թաշչյանը: Նախագահն ու հոգաբարձուն է Վան Գրիգորյանը:

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 15/04/2010 21:40 Page 1



# Ուղեգրի բախտը կորոշի պատասխան հանդիպումը

Վերջին 3 տարիներին Հայաստանի գավաթի խաղարկություններում «Բանանցը» «Միկայի» համար անանցանելի պատնեշ է դարձել: 3 տարի շարունակ մրցակիցների ճանապարհները հատվել են գավաթի խաղարկության կիսաեզրափակիչում եւ բոլոր դեպքերում էլ եզրափակիչի ուղեգիրը բաժին է հասել «Բանանցի» ֆուտբոլիստներին:

Եվ ահա վիճակահանության քմահաճույքով «Բանանցն» ու «Միկան» գավաթի ընթացիկ խաղարկությունում էլ կրկին զույգեր են կազմել կիսաեզրափակիչում: «Հանրապետական» մարզադաշտում կայացավ թիմերի առաջին հանդիպումը: Հոգեբանական առումով որոշ առավելությունը «Միկայի» կողմն էր, քանի որ առաջնության խաղում 4-0 հաշվով ջախջախել էր «Բանանցին»:

Խաղն անցավ գավաթային հանդիպումներին բնորոշ անհաշտ մրցակցությունում: Արդեն 6-րդ րոպեին օգտվելով «Միկայի» պաշտպանների կոպիտ սխալից, Ռոբերտո Էդուարդո դոս Սանթոսը մենմենակ հայտնվեց դարպասի դիմաց, սակայն վերջին պահին նրան վայր գցեցին: Սակայն մրցավարը խաղի կանոնների խախտում չարձանագրեց: 6 րոպե անց «Միկան» հասավ հաջողության: Ձախ թեւից կատարված փոխանցումից հետո Նարեկ Բեգլարյանը գլխի հարվածով խոցեց դարպասը:




Բաց թողած գոլը չընկճեց «Բանանցի» ֆուտբոլիստներին, որոնց ընդամենը 3 րոպե պահանջվեց հավասարակշռությունը վերականգնելու համար: Աջ թեւում ստանալով գնդակը, Վեբերս Միգել դա Սիլվան առաջ շարժվեց եւ սուր անկյան տակ գրավեց դարպասը:

Թվում էր, թե ընդմիջումից հետո ֆուտբոլիստներն ավելի սուր մրցակցություն կծավալեն ու նոր գոլեր կգրանցվեն: Սակայն 2-րդ խաղակեսն անցավ անհետաքրքիր պայքարում: Կողմերին այդպես էլ չհաջողվեց լուրջ սպառնալիքներ ստեղծել: Խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1, իսկ դա նշանակում է, որ եզրափակիչի ուղեգրի բախտը կորոշվի ապրիլի 21-ին կայանալիք խաղում:

# Ադվոկատը ՌԴ հավաքականի մարզչի հիմնական թեկնածուն է

Բելգիական լրատվամիջոցների ներկայացուցիչները համոզված են, որ ապրիլի 30-ին Բուլղարիայի հավաքականի հետ ընկերական հանդիպումը Դիկ Ադվոկատի համար կլինի վերջինը Բելգիայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում: Հոլանդացի մասնագետը համարվում է Ռուսաստանի հավաքականի գլխավոր մարզչի հիմնական թեկնածուն: Դիկ Ադվոկատը, որը նաեւ հոլանդական «Ալկմարի» գլխավոր մարզիչն է, առայժմ այդ տեղեկատվությունը չի հաստատել:

Դիկ Ադվոկատը Բելգիայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում տարեկան 600 հազար եվրո աշխատավարձ է ստանում, ինչը չէս համեմատի Գուս Հիդինգի եկամուտի հետ: Իհարկե, նախատեսված է նաեւ պարգեւավճար, եթե հավաքականը նվաճի Եվրո-2012-ի ուղեգիր: Երբ նա ժամկետից շուտ խզեց պայմանագիրը «Զենիթի» հետ՝ համապատասխան փոխհատուցում ստանալով, պատճառն ընտանեկան հանգամանքներն էին: Ադվոկատը հայտարարել էր, թե կինը սպառնում է ամուսնալուծվել:

Բելգիայի ֆեդերացիայի հետ պայմանագիր կնքելիս էլ Ադվոկատը մի կետ է մտցրել, որ ժամկետից շուտ խզելու դեպքում 1 մլն եվրո փոխհատուցում պիտի ստանա: Բելգիայում տարբեր կերպ են վերաբերվում Ադվոկատի կատարած քայլերին: Մարզիչը շատ խիստ քննադատել է մարզական չինովնիկներին, ովքեր թիմի ներքին խոհանոցը քննարկման թեմա են դարձնում լրատվամիջոցներում: Առանց երկար մտածելու, նա հավաքականից հեռացրեց «Բրյուգեի» դարպասապահ Ստեյն Ստեյնենին:

Առայժմ Ռուսաստանի ֆուտբոլային միությունն էլ ոչինչ չի հրապարակում Ադվոկատի հետ տարվող բանակցությունների մասին: ՌՖՄ նախագահ Սերգեյ Ֆուրսենկոյի համար Դիկ Ադվոկատն իդեալական թեկնածու է: Նրանք ընտանիքներով մտերմություն են անում: Թե որքանով հիմնավոր կլինեն բելգիացի լրագրողների կանխատեսումները, ցույց կտա ժամանակը:

# «Ինտերը» եզրափակիչում

Հայտնի դարձավ ֆուտբոլի Իտալիայի գավաթի եզրափակիչի առաջին մասնակիցը: Կիսաեզրափակիչի պատասխան խաղում էլ հաղթելով «Ֆիորենտինային», «Ինտերն» իրավունք ստացավ վիճարկելու գավաթը: Հանդիպման միակ գոլը 57-րդ րոպեին խփեց թիմի կամերունցի հարձակվող Սամյուել Էտո՛Օ-ն: Մրցակիցների առաջին խաղում էլ «Ինտերը» հաղթել էր 1-0 հաշվով:

Եզրափակիչի երկրորդ մասնակիցը հայտնի կդառնա ապրիլի 21-ին կայանալիք «Ռոմա»-«Ուդինեզե» պատասխան խաղում: Առաջին խաղում «Ռոման» հաղթել է 2-0 հաշվով: Այնպես որ ամենայն հավանականությամբ գավաթը կվիճարկեն «Ռոման» եւ «Ինտերը»:

# 15 օր բանակցելու համար

Բռնցքամարտի համաշխարհային խորհուրդը (WBC) Նիկոլայ Վալուեւի եւ կուբացի բռնցքամարտիկ Օդլանյեր Սոլիսի ներկայացուցիչներին մինչեւ ապրիլի 30-ը ժամանակ է տվել ընտրական մենամարտի կազմակերպչական հարցերը լուծելու համար: Այդ մենամարտի հաղթողը կդառնա WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսի պարտադիր հավակնորդ: Այդ տիտղոսը ներկայումս պատկանում է Վլադիմիր Կլիչկոյին: Եթե կողմերին չհաջողվի բանակցությունների արդյունքում համաձայնության գալ, ապա ապրիլի 30-ին WBC-ի նստավայր Մեխիկոյում մենամարտի կազմակերպման համար մրցույթ կանցկացվի: Կհաղթի պրոմոութերական այն կազմակերպությունը, որն ամենամեծ մրցանակային հիմնադրամը կառաջարկի:

# Տոմսերը կվաճառվեն սուպերմարկետներում

Ֆուտբոլի աշխարհի առաջնության մոտ կես միլիոն տոմսերը վաճառքի են հանվել Հարավաֆրիկյան Հանրապետության այն 9 քաղաքների առեւտրական կետերում, որտեղ անցկացվելու են ֆուտբոլային հանդիպումները: Տոմսերը վաճառքի կհանվեն նաեւ սուպերմարկետներում: Բացի հուլիսի 11-ին Յոհանեսբուրգում կայանալիք եզրափակիչ հանդիպման տոմսերից, մյուս 63 խաղերի տոմսերը դեռ հնարավոր է գնել:

Մինչ այդ առաջնության տոմսերը վաճառվել են ՖԻՖԱ-ի պաշտոնական կայքէջի եւ տեղական բանկերի միջոցով, ինչը հարավաֆրիկացի ֆուտբոլասերների դժգոհությունն էր հարուցել: Ըստ ՖԻՖԱ-ի տվյալների, արդեն մոտ 2,2 մլն տոմս է վաճառվել:

# Գլխավոր հավակնորդը Մոուրինյոն է

«Բարսելոնին» 0-2 հաշվով պարտվելուց հետո Մադրիդի «Ռեալի» ղեկավարությունը որոշել է մրցաշրջանի ավարտից հետո պաշտոնանկ անել թիմի գլխավոր մարզիչ Մանուել Պելեգրինիին: Չիլիացի մասնագետն արքայական ակումբը գլխավորել էր 2009-ի ամռանը՝ պայմանագիր կնքելով մինչեւ 2011-ը: Իսպանական լրատվամիջոցները «Ռեալի» գլխավոր մարզչի պաշտոնի հիմնական հավակնորդ են համարում իտալական «Ինտերի» մարզիչ Ժոզե Մոուրինյոյին:

# Մարզադաշտը նախագահի անվամբ

Հնարավոր է, որ Վարշավայի մարզադաշտը, որտեղ 2012-ի հունիսի 8-ին նախատեսված է ֆուտբոլի Եվրոպայի առաջնության բացման հանդիպումը, անվանվի Սմոլենսկի մոտ ավիավթարի զոհ դարձած Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկու անվամբ: Երկրի սպորտի եւ զբոսաշրջության նախարարությունը գտնում է, որ դա ճիշտ քայլ կլինի: Ներկայումս ընթանում են մարզադաշտի շինարարական աշխատանքները, որոնք պետք է ավարտվեն հաջորդ տարվա մայիսին:

# Հայ հոկեյիստների հաղթական մեկնարկը




Հայաստանի հավաքականը հաղթանակով մեկնարկեց Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում անցկացվող տափօղակով հոկեյի աշխարհի C խմբի առաջնությունում: Մեր հոկեյիստները մեկնարկային խաղում 9-2 հաշվով պարտության մատնեցին Հարավաֆրիկյան Հանրապետության հավաքականին:

Աշխարհի առաջնության 2-րդ հանդիպումը Հայաստանի հավաքականն անցկացրեց ԿԺԴՀ-ի հոկեյիստների հետ, որոնք նախորդ օրը 22-1 հաշվով ջախջախիչ պարտության էին մատնել Մոնղոլիայի հավաքականին: Երկրորդ հանդիպումն էլ մեր հոկեյիստները հաջող անցկացրին եւ հաղթեցին 7-6 հաշվով:

Նշենք, որ աշխարհի առաջնության B խմբի միակ ուղեգիրը կվիճարկեն երեւանյան մրցաշարում 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները: Բացի B խմբի ուղեգրից, հաղթողն իրավունք կստանա մասնակցելու 2014-ի ձմեռային օլիմպիադայի հոկեյի մրցաշարի ընտրական փուլի հանդիպումներին:

# Արայիկ Մարությանին Բաքուն վերջին պահին է վիզա տրամադրել

Գերմանահայ բռնցքամարտիկ Արայիկ Մարությանը Բաքվում կմասնակցի պատանիների աշխարհի առաջնությանը, որտեղ Գերմանիայից հանդես կգան 9 բռնցքամարտիկներ: Ինչպես պատկերավոր շարադրում են լրատվամիջոցները, Արայիկ Մարությանի մասնակցությունը կախված է եղել մազից: Թեպետ շվերինցի տաղանդավոր բռնցքամարտիկը 18 տարին չի բոլորել, բայց սա խնդիր չի դարձել, որ նա մասնակցի առաջնությանը: Մինչեւ վերջին րոպեն Ադրբեջանը մերժել է վիզա տրամադրել հայազգի բռնցքամարտիկին: Միայն բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի միջամտությամբ է նա Բաքու մեկնելու այցագիր ստացել:

Ան. Հ.

Գերմանիա

# Նալբանդյանը հաղթում է մրցակիցներին

Դավիթ Նալբանդյանը հաջող է մեկնարկել Մոնտե Կառլոյում անցկացվող թենիսի մրցաշարում: Առաջին փուլում Նալբանդյանը 6-3, 6-1 հաշվով հաղթեց գերմանացի Անդրեաս Բեկին, իսկ հաջորդ փուլում պայքարից դուրս մղեց ռուսաստանցի Միխայիլ Յուժնուն (4-6, 6-3, 7-6): 3-րդ շրջանում Նալբանդյանի մրցակիցը կլինի իսպանացի Թոմի Ռոբրեդոն: Վերջինս հաղթել էր սերբ Վիկտոր Տրոիցկուն (6-4, 6-3):

# Մելքումյանը զիջեց միայն լրացուցիչ գործակիցներով



Դուբայում վերջնագիծը հատեց շախմատի միջազգային մրցաշարը, որի 147 մասնակիցների թվում էին հայաստանցի 5 շախմատիստներ: Մեր պատվիրակներից բոլորից հաջող հանդես եկավ Հրանտ Մելքումյանը: Ավարտական տուրում սեւերով հաղթելով ադրբեջանցի Էլթաջ Սաֆարլիին, Մելքումյանը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր եւ դարձավ մրցաշարի հաղթողներից մեկը: Լրացուցիչ գործակիցներով հայ շախմատիստը զբաղեցրեց 6-րդ տեղը: 1-ին հորիզոնականը գրավեց Վենետուելայի ներկայացուցիչ Էդուարդո Իտուրիզագան, որին հաջորդեցին նույնքան միավոր վաստակած մոլդովացի Վիորել Յորդակեսկուն, բելառուսցի Ալեքսեյ Ալեքսանդրովը, վրացի Տորնիկե Սանիկիձեն, ադրբեջանցի Ղադիր Հուսեյնովը, Վրաստանը ներկայացնող Դավիթ Հարությունյանն ու ռուսաստանցի Սերգեյ Վոլկովը:

Հրանտ Մելքումյանը մրցաշարում միայն մեկ պարտություն կրեց՝ 5-րդ տուրում զիջելով հնդիկ գրոսմայստեր Պարիմարջան Նեգիին: Մյուս 8 պարտիաներից 6-ում Հրանտը հաղթեց, 2-ն ավարտեց ոչ-ոքի:

Մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող Գաբրիել Սարգսյանը 6,5 միավորով զբաղեցրեց 10-րդ տեղը: 9-րդ տուրում նա սեւերով պարտության մատնեց վրացի գրոսմայստեր Դավիթ Շենգելիային: Գաբրիելն էլ միայն մեկ պարտություն կրեց՝ զիջելով բելառուսցի Ալեքսեյ Ալեքսանդրովին: 5 պարտիաներում Սարգսյանն առավելության հասավ մրցակիցների նկատմամբ, երեք մրցախաղում հաշտություն կնքեց:

5,5-ական միավոր վաստակեցին Տիգրան Քոթանջյանը եւ Տիգրան Պետրոսյանը: Քոթանջյանը ոչ-ոքի խաղաց Մոհսեն Շարբաֆի հետ եւ գրավեց 30-րդ տեղը, իսկ Պետրոսյանը պարտվեց Վադիմ Մալախատկոյին ու տեղ զբաղեցրեց 41-րդ հորիզոնականում: Գեւորգ Հարությունյանը 5 միավորով հանգրվանեց 50-րդ տեղում:

# Խոշոր գործարք

Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան իր պատմության ընթացքում ամենախոշոր հովանավորչական պայմանագիրն է կնքել ադրբեջանական «Ատա Հոլդինգի» հետ: Վերջինս չորս տարվա ընթացքում ֆեդերացիային 7 մլն դոլար կտրամադրի:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 15/04/2010 21:42 Page 1



# Համանախագահները համոզո՞ւմ են

**«Ազգը»-ը** երեկ անդրադարձավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարություններին՝ արված այդ երկրի կառավարության նիստի ընթացքում: Ալիեւը արդեն որերորդ անգամ շեշտեց, որ Ղարաբաղի հիմնահարցը պետք է լուծվի միջազգային իրավունքի հիման վրա. «Նախ պետք է հայերը զորքերը հանեն, ապա ադրբեջանցի փախստականները պետք է վերադառնան ազատագրված բոլոր տարածքներ, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղ, ինչից հետո նոր կարող է որոշվել ԼՂ-ի կարգավիճակը, որը հնարավոր է միմիայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Ադրբեջանը երբեք չի համաձայնի այդ շրջանակից դուրս որեւէ կարգավիճակի, իսկ առանց մեր համաձայնության ոչ ոք չի ճանաչի ԼՂ-ն», նշել էր **Ալիեւը:**

Այս ամենը, «փաստորեն», արտացոլված է նաեւ «նորացված» մադրիդյան սկզբունքներում, հակառակ դեպքում ինչպե՞ս կարող էր Բաքուն համաձայնել դրանց: Ի դեպ, Ալիեւը նշել է նաեւ, որ «մադրիդյան նորացված սկզբունքների հիման վրա արված առաջարկներում» Ադրբեջանի համար անհանգստացնող պահեր շատ քիչ կան. «Շատ քիչ բացառություններով՝ այդ առաջարկը պետք է ընդունվի որպես հիմք, եւ այդ հիմքի վրա պետք է խաղաղության համաձայնագիր պատրաստվի», ասել է Ալիեւը:

Իսկ Հայաստանը, Ադրբեջանի նախագահի խոսքերով, արհեստականորեն ձգձգում է բանակցությունները. «Նրանք փորձում են վերադառնալ որոշակի փուլերում արդեն համաձայնեցված հարցերին՝ ժամանակ շահելու համար: Սակայն այժմ մենք այն փուլում ենք, որ Հայաստանը պետք է պատասխանի Մինսկի խմբի անդամ պետությունների առաջարկին, իսկ եթե հայերը չընդունեն այդ առաջարկը, այդ ժամանակ, կարծում եմ, բանակցությունները կկորցնեն իրենց իմաստը», շեշտել է Ալիեւը՝ հավելելով, որ բանակցություններն այսօր թեւակոխել են վճռական փուլ, եւ «միջնորդ երկրներն այսօր փորձում են համոզել հայկական կողմին՝ ընդունել առաջարկությունը»:

Այլեւս ավելորդ համարելով մեջբերել Մերզլյակովի հայտնի ուղղումը, միայն մի բան հստակեցնենք. այդ ինչպե՞ս են այսօր Մինսկի խմբի համանախագահները զբաղված Երեւանին համոզելով, երբ, օրինակ, նրանց հաջորդ այցը տարածաշրջան կսահմանափակվի միայն Բաքվով, այդ ինչպե՞ս են բանակցությունները թեւակոխել վճռական փուլ, երբ այդ մասին հայտարարում է միայն Ադրբեջանի նախագահը, այնինչ, եթե իրոք այդպես լիներ, շատ ավելի տրամաբանական է, որ այդ մասին կբարձրաձայնեին Մինսկի խմբի համանախագահները՝ դեռ «գլուխ էլ կգովեին», որ տեսա՞ք, «այսքան բարդ» ղարաբաղյան բանակցությունները թեւակոխեցին վճռական փուլ: Այնպես որ, ինչպես Վաշինգտոնում արդարացիորեն նկատեց ՀՀ ԱԳ նախարար **Նալբանդյանը,** «պետք չէ շատ հավատալ ադրբեջանական մամուլին», մեր կողմից էլ ավելացնենք՝ նաեւ նախագահին:

Ալիեւը նշել է, որ համանախագահ երկրների համար արդեն պարզ է, որ «հայկական կողմը խափանում է բանակցությունները», եթե այդպես է, կկարողանա՞ր արդյոք Երեւանը դիմանալ արտաքին ճնշումներին, մանավանդ հայ-թուրքական համատեքստում: Չէ՞ որ, ինչպես Վաշինգտոնից վերադառնալուց հետո նշեց Էրդողանը, ե՛ւ նախագահ Օբաման, ե՛ւ Մեդվեդեւը հետաքրքրված են Ղարաբաղի հիմնահարցի շուտափույթ լուծմամբ: Ինչ վերաբերում է Էրդողանին, ապա վերջինս նաեւ հայ-թուրքական գործընթացի արագացման տարբերակ է առաջարկել. «Եթե հայերը դուրս գան Ադրբեջանից գրաված գոնե երկու շրջաններից, գործընթացը կարագանա»: Բաքվում արդեն նախագահ Ալիեւը հայտարարում է. «Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները այդ երկու պետությունների խնդիրն են, եւ որեւէ երրորդ երկիր չի կարող միջամտել»: Հակասում եք միմյանց, պարոնայք, հակասում եք:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Մարզային տեղեկատվական կենտրոնը՝ միգրանտներին

**Չեխական «Մարդիկ կարիքի մեջ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի եւ ՄԱԿ-ի հայկական ընկերակցության կողմից համատեղ իրականացվող «Հայաստանում միգրացիոն հոսքերի կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում Երեւան քաղաքում եւ հանրապետության չորս մարզերում գործում են միգրացիոն տեղեկատվական կենտրոններ, որոնց նպատակը միգրանտներին հնարավոր խորհրդատվական եւ գործնական աջակցության ցուցաբերումն է: Շիրակի մարզում անցյալ տարվա ապրիլից գործող միգրացիոն տեղեկատվական կենտրոնում հրավիրված մամուլի ասուլիսում կենտրոնի 2009 թ. գործունեությունը ներկայացրին այս կառույցի համակարգող Սերգեյ Գաբրիելյանը եւ չեխական նշված կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասարակայնության հետ կապերի բաժնի պատասխանատու Գալուստ Նանյանը:**

**«Հայաստանում միգրացիոն հոսքերի կառավարման հզորացում» ծրագիրը կոչված է նպաստելու անօրինական միգրացիայի կանխարգելմանը եւ օգնելու վերադարձողներին՝ գտնել իրենց տեղը կյանքում: Ինչպես նշվեց ասուլիսում, կենտրոնը մեկ տարվա ընթացքում ընդունել է Հայաստան վերադարձած 38 քաղաքացիների եւ 35 հավանական միգրանտների, ովքեր ցանկացել են օգտվել ծրագրից: Վերադարձածները եղել են ինչպես Ռուսաստանից, այնպես էլ Եվրոմիության երկրներից: Կենտրոնում իրավաբանական, սոցիալական եւ տնտեսագիտական խորհրդատվություն են ստացել 51 շահառուներ: Իսկ գործող «Թեժ գիծ» ծառայությունից առայժմ օգտվել է 13 մարդ, որոնք հետաքրքրվել են ԵՄ եւ ՌԴ միգրացիոն օրենքներով, Շենգենյան երկրների վիզայի հարցերով:**

**Շիրակի մարզի միգրացիոն տեղեկատվական կենտրոնն անցյալ տարի կազմակերպել է հաշվապահական մասնագիտական վերապատրաստման, գործարարության 2 դասընթացներ, որոնց մասնակցել են այստեղ գրանցված ընդհանուր առմամբ 37 շահառուներ: Դրամաշնորհային աջակցություն է ցուցաբերվել ինտերնետային ակումբ բացելու մեկական բիզնես ծրագրի Գյումրի եւ Մարալիկ քաղաքներում, դրանց համար տրամադրվել են 1 մլն 800-հազարական դրամի սարքեր ու սարքավորումներ:**

Գ. Ս.

**Արմենական-Ռամկավար ազատական կուսակցություն**

Սիրով հրավիրում ենք

**«Սվազլյան գերդաստանի հավատամքը»**

ֆիլմի ցուցադրությանն ու շնորհանդեսին, որը տեղի կունենա Թեքեյան կենտրոնում, ս.թ. **ապրիլի 21-ին, ժամը 18-ին:**

Հասցեն՝ Խանջյան 50:

Սցենարի հեղինակ եւ ռեժիսոր՝ **Լաուրա Մինասյան**

Պրոդյուսեր եւ երաժշտական ձեւավորող՝ **Կարեն Խառատյան**

Կարդում է Հայաստանի վաստակավոր արտիստ **Սարգիս Նաջարյանը**

# «Իրականում խնդիրը բուն Ղարաբաղը չէ, այլ՝ հարակից շրջանները»

*1-ին էջից*

**- Վաշինգտոն կատարած Ձեր այցելությունը չի՞ հանգեցրել Հայաստանի հետ հարաբերություններում որեւէ փոփոխության:**

- Կցանկանայինք, որ շատ ավելի մեծ լինի առաջխաղացումը: Սակայն Հայաստանը պատրաստ չէ դրան: Նախ ես Սարգսյանին հղած նամակում ասել եմ. «Թուրքիան ուրիշներին հիշողության սեփական գրանցումներ պարտադրելու մտադրություն չունի, սակայն ոչ ոք թող չփորձի իր հիշողությունը պարտադրել Թուրքիային»: Երկրորդ՝ մենք հարգում ենք պարտավորվածություններին հավասարմության սկզբունքը: Հետամուտ ենք մեր ստորագրությանը: Նրանք ուզում են առանց նախապայմանի: Թեեւ արձանագրությունների տեքստում պարզորոշ նշված չէ, սակայն օգտագործվում է «տարածաշրջանային խաղաղության ամրապնդման հետ է կապված (հայ-թուրքական նորմալացումը)» արտահայտությունը: Այս արտահայտությունն ինքնին օրակարգային է դարձնում Ղարաբաղի հարցը: Իրականում խնդիրը բուն Ղարաբաղը չէ, այլ հարակից շրջանները (ծանոթ. հայկական օկուպացիայի տակ գտնվող ադրբեջանական վարչական յոթ միավորներ): Եթե առաջին փուլում այս շրջաններից գոնե երկուսը վերադարձվի, ապա կբացվի գործընթացի (նորմալացման) ճամփան: Նրանց մտադրությունը Ղարաբաղի հայկական տարածք լինելը ադրբեջանցիներին պարտադրելն է: Մինչդեռ ադրբեջանցիները չեն առարկում հայերի բնակությանը Ղարաբաղում: Ասում են, որ Ղարաբաղի կարգավիճակի որոշումը այսօրվա խնդիր չէ, դա կարելի է քննարկել 10-15 տարի հետո: Այսինքն եթե լուծվի հարակից շրջանների հարցը ե՛ւ նեղությունները կնվազեն Թուրքիա-Հայաստան հարաբերություններում, ե՛ւ կթուլանա լարվածությունը Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ:

**- Որո՞նք էին Օբամայի հետ Ձեր հանդիպման ծանրակշիռ թեմաները:**

- Հայաստանն ու Իրանը: Սակայն Իրանը գագաթնաժողովում (միջուկային անվտանգության) օրակարգի հարց չդարձավ: Մենք ի սկզբանե կողմնակից ենք, որ Իրանի միջուկային ծրագրի հարցը լուծվի բանակցությունների միջոցով: Մեզ հետ համամիտ է նաեւ Բրազիլիան: Սակայն, որքան հայտնի է, ԱՄՆ-ը Իրանի նկատմամբ շուտափույթ նոր պատժամիջոցներ կիրառելու ձգտում ունի: Շուտով, ըստ երեւույթին, նորից Թեհրան կգործուղենք արտգործնախարար Դավութօղլուին:

Հ. Չ.

**ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ի բիզնես ինֆորմացիայի եւ խորհրդատվության բաժինն առաջարկում է կազմակերպել էքսպորտային վարկեր Սլովակիայից Հայաստան եւ ԼՂՀ**

Վարկերը երաշխավորվում են Սլովակիայի պետության կողմից.

- հատուկ ապրանքային վարկատեսակ
- կարճաժամկետ, միջին ժամկետի եւ երկարաժամկետ գործարքներ
- ամբողջական կամ մասնակի ֆինանսավորում
- վարկերը տրամադրվում են ցանկացած արտարժույթով:

Այս ծրագրի շրջանակներում հնարավոր է ներկրել Եվրոպական արտադրության որակյալ ծառայություններ եւ ապրանքատեսակներ.

- բժշկական սարքավորումներ,
- գյուղատնտեսական տեխնիկա եւ նյութեր,
- շինարարական տեխնիկա, հոսքագծեր եւ նյութեր,
- կենցաղային տեխնիկա,
- տարբեր նշանակության եւ տրանսպորտային միջոցներ,
- կլիմատիզացիոն համակարգեր,
- սննդամթերք,
- եւ այլն:

Ներկրվող ապրանքների ու ծառայությունների ոլորտների եւ տեսակների սահմանափակում չկա:

Հատուկ բարենպաստ պայմաններով իրականացվում են ՀԷԿ-երի կառուցման, սարքավորումների ներկրման եւ գործարկման աշխատանքները:

Վարկերը տրամադրվում են տարեկան 7-8% տոկոսադրույքով:

Մարման ժամկետը՝ 5-8 տարի:

Մանրամասներին ծանոթանալու համար կարող եք այցելել **www.nt.am** կամ **www.market. nt.am** էլ. կայքերը, գրել մեզ՝ **manush@nt.am** հասցեով, այցելել մեզ՝ Երեւան, Իսահակյան 28, կամ զանգահարել **+37410 56-59-65, 094 366 989** հեռախոսահամարներով:

**Անիտուր պատմամշակութային զբոսաշրջային գործակալությունը մայիս-հոկտեմբեր ամիսներին կազմակերպում է.**

3-օրյա՝ Կարս, Անի, Արդահան, Չլդր լիճ

7-օրյա՝ Պատմական Հայաստանի մայրաքաղաքները Կարս, Անի, Վան, Տիգրանակերտ

10-օրյա՝ Իրան (Թավրիզ, Ուրմիա, Սալմաստ, Թադեի վանք, Մակու)

Արեւմտյան Հայաստան (Վան, Մուշ, Էրզրում, Կարս, Անի), Թբիլիսի:

15-օրյա՝ Արեւմտյան Հայաստան (Կարս, Անի, Վան, Տիգրանակերտ ),Կիլիկիա (Հռոմկլա,Նեմրութ սար,Այնթապ, Մուսա լեռ, Ադանա, Սիս, Անարզաբա, Կոռիկոս, Խարբերդ, Էրզրում), Հալեպ եւ Կիպրոս:

**Հատուկ տուր**

Վերելք Բիբլիական Արարատի գագաթ /7օր/

Տեղեկութիւնների համար զանգահարել՝

**Հեռ: 519226, 094203206, 091203206 կամ այցելել**

**Իսահակյան 28,1-ին հարկ սեն. 20**

**www.anitour.org info@anitour.org**

www. azg.am

Ռիելթոր Ֆլորես Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀԲ-ի հարթակում իրականացնելու է «Յունիբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ.մակերեսը 54.0 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Ա. Խաչատրյան փ., 12շ., բ. 13: Մեկնարկային գինը՝ 20000000 դրամ:
- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 83,2 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Հարավ-Արեւմտյան Բ-1 թաղ., 88շ., բն. 45: Մեկն. գինը՝ 17000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 17.05.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել **www.akson.am**:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: